

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 26.07.2023թ. չորեքշաբթի թիվ 31 (1108)

## Մինաս

Լրացավ Մինաս Ավետիսյանի ծննդյան 95-ամյակը...

15 տարի առաջ՝ Մինաս Ավետիսյանի ծննդյան 80-ամյակի կապակցությամբ, «Կրթությունը» գրել էր.




«Լրացավ Մինաս Ավետիսյանի ծննդյան 80-ամյակը... Ընդամենը՝ ութսուն... Այնինչ, նրա եղերական մահվան օրվանից, թվում է, թե մի ամբողջ հավերժություն է անցել... առնվազն մի հասարակարգ կամ անագատ դարաշրջան... «Ծանր խավարը», թվում է, թե մեզ թողել, հեռացել է առհավետ... «Մինասին սպանեցին»՝ 33 տարի առաջ հնչած գույժը ցնցեց ամենքիս, ինչպես 1971-ին, երբ դարձյալ 47 տարեկանում սպանվեց Պարույր Սեւակը: Մինասից հետո, մեղա՛, Տե՛ր, ճիշտ նույն 47 տարեկան հասակում որսի ժամանակ, իբրև թե պատահական կրակոցով, զոհվեց Մուշեղ Գալշոյանը... «Ծանր խավարը» մեր լուսարար զավակների խժռում էր ոչ միայն դավադրաբար, այլև՝ հեզմանքով... «Ես եմ տերը, ձեր փրկիչը, ձեր գոյատևման համար ինձ եք պարտական, ձեր ապրելու իրավունքը ինձ է պատկանում»...  
Մեղա՛, Տե՛ր, հանկարծ չվերադառնա՛...  
Մինաս... Անուն-լեզուն: Ոչ միայն մարդու, թեկուզ եւ շատ մեծ մարդու անուն մի հավերժող, այլև՝ տեսակի անվանում... Մինաս, որ կարող ենք գրել նաեւ փոքրատառ սկզբնատառով՝ իբրև հասկացություն, մի անսահման մեծ բովանդակություն ամբարող երեւոյթի իմաստակիր գոյական: Մինաս, մինասներ, հազվագյուտ էակներ, որ դառնում են նահատակ հենց միայն իրենք-իրենցով բովանդակած ազգային ատաղձ լինելու համար, նրանց ե՛ւ կյանքի յուրաքանչյուր դրվագը, ե՛ւ արարած յուրաքանչյուր գործը դառնում է ցեղի գոյության հիմք, սկզբնաղբյուր եւ մնայուն արժեքարդյունք... Մարտիրոսներ, որ միջնադարում «Ձեռս մաշի, դառնա ի հող, գիրս մնա հիշատակող» սկզբունքով, ինչպես աղը կերակուրների մեջ, անձնագրովում էին՝ մնալով անանուն եւ անձնապես անջրպետվելով պատմությունից ու անեանալով ժամանակի մեջ՝ ապահովում էին մեր անմահությունը... Դարեր հետո նույն մարտիրոսները՝ մինասներ, սեւակներ, մուշեղներ, դարձան մեր առողջությունը, անաղարտությունը, տեսակի պահպանման հույսը, գրավականը, հյուլեն...

Մինասը ութսուն տարեկան չէ, ութ հազար տարեկան է Մինասը: Մինասը անմահ է»:

Այսպես կարող էր գրվել նաեւ այսօր:

Այսպես կարող է գրվել նաեւ վաղը:

Գ. Մ.



## Երկրապահ



Բառը թոթափեց պատմության կարմիր փոշին եւ վերածնվեց իր հզոր իմաստով: Միտըր էլավ Ազոավաքարից եւ երբ կրկին հեծավ Քուռկիկ Ջալալին, ոսխը վախից ոռնաց: Միաբանված թշնամին նախահարձակ եղավ եւ կնքեց իր առաջին մահկանացուն:


Բառը դարձավ ոգի, ուժ, վահան, նետ ու խոցեց գազանին. Հայրենիքի գերված վերջին հատվածն առաջինն ազատագրվեց: Բացվեց զսպանակը: Ու Միտըր զրկվեց նորից Ազոավաքար մտնելու իրավունքից:

Բառը դարձավ էություն, միտք, նպատակ: Ու հեռվում երեւաց թուր Կեծակին... Քանի փետրվար, քանի գարթոնք ու քանի մայիս պիտի անցնի դեռ, ու քանի հոգեվարք պիտի ապրի իր վերջին վերջին ընդառաջ ոսխըր նույնիհին՝ գիտի միայն Աստված:

Ի սկզբանե էր Բանը: Սկզբում խոսքն էր՝ Բանն Աստուծո: Ու Բառը դարձավ գործ: Հազար տարվա նահանջը նահանջեց: Բառը նորից դարձավ նկարագիր, տեսակ, գոյության առհավատյա: Բառը վերադարձավ Հայրենիք, ու Հայրենիքն սկսեց վերադառնալ:

Գ. Մ.

տե՛ս՝ նաեւ էջ 2



# «Վազգեն Սարգսյանի անունից պիտի չվախենանք ասել՝ Հայրենիքը Պետությունն է, եւ Պետությունը Հայրենիքն է»

Վարչապետ **Նիկոլ Փաշինյան**ն Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ներկա է եղել Երկրապահ կամավորականների միության ստեղծման 30-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը: Հանդիսությունը ներկա էին նաեւ Վարչապետի աշխատակազմի ղեկավար **Արայիկ Հարությունյանը**, ՀՀ Պաշտպանության նախարար **Սուրեն Պապիկյանը**, ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ **Ռուբեն Ռուբինյանը**, ՀՀ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ **Էդվարդ Ասրյանը**, ԵԿՄ նախագահ **Սասուն Միքայելյանը**, պատգամավորներ, Կառավարության անդամներ, ԵԿՄ անդամներ:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք են մատուցել հանուն Հայրենիքի կյանքը նվիրաբերած հայորդիների հիշատակին: Վարչապետը հանդես է եկել ելույթով, որում, մասնավորապես, նշել է.



«Պաշտպանության հարգելի՛ նախարար, Երկրապահ կամավորականների միության հարգելի՛ նախագահ, Մեծարգո՛ երկրապահներ, Պետական այրեր, Պետության հայրեր, Հայրենիքի ներկաներ, Այսօր նշում ենք Երկրապահ կամավորականների միության 30-ամյակը ճգնաժամի պայմաններում՝ աշխարհաքաղաքական ճգնաժամի, Լեռնային Ղարաբաղում հաստատված հունանիտար ճգնաժամի եւ, ընդհանրապես, աշխարհակարգի փլուզման պայմաններում: Երկրապահ կամավորականների միության 30-ամյակն, իհարկե, առաջին հերթին ձեր անցած ճանապարհն արժեւորելու առիթ է, շնորհավորելու մեզ բոլորիս այդ առիթով: Բայց իրականում երկրապահության պատմությունը եւ երկրապահի պատմությունը մի փոքր ավելին է: Այն իրականում կապ ունի Հայաստանի Երրորդ Հանրապետության ստեղծման եւ պետականակերտման հետ: Թո՛ւյլ տվեք ասել՝ երկրապահությունն, իմ ընկալմամբ, առաջին հերթին ձեւավորեց՝ որպես մտածողության փոփոխություն, եւ այդ մտածողության փոփոխության առաջին կրողը հենց Վազգեն Սարգսյանն էր: Ո՞չ ոչ Վազգեն Սարգսյանը: Մենք նրան հիմա գիտենք որպես Սպարապետ, որպես Հայոց բանակի հիմնադիր, որպես Երկրապահ կամավորականների միության հիմնադիր: Թերեւս վստահ չեմ, որ ներկաներից բոլորը գիտեն, բայց Վազգեն Սարգսյանը նույնիսկ բանակում չէր ծառայել՝ խորհրդային բանակում: Նա խոստումնալից գրող էր, խոստումնալից կազմակերպիչ, մշակույթի ոլորտի խոստումնալից գործիչ: Ինչպե՞ս ստացվեց, որ նա դարձավ Հայոց սպարապետ: Առաջին հերթին, մտածողության փոփոխության բերումով, որովհետեւ այդ մտածողությունն է՝ հասկանալ ինչ է կատարվում եւ աղէկվատ արձագանքել կատարվողին, դա է մտածողության փոփոխության ամենակարեւոր բաղադրիչը: Վազգեն Սարգսյանը հասկացավ, որ Հայոց պետականությունն ամենակարեւորն է եւ ամեն ինչից վեր: Ես շատ ուրախացա, երբ տեսա, ահա, այս պատասառը, որովհետեւ Վազգեն Սարգսյանի ժառանգությունից շատ բան կարելի է թվարկել: Այս բոլոր պատերը կարելի է զարդարել Վազգեն Սարգսյանի ժառանգությամբ, բայց շնորհակալ եմ, որ ընտրված է հենց սա, որովհետեւ խոսքը պետության եւ պետականության մասին է: Ինչի՞ համար է պայքարել Վազգեն Սարգսյանը, պիտի ասես նաեւ իմ համոզմունքը, թե ինչո՞ւ է սպանվել Վազգեն Սարգսյանը: Իմ համոզմունքն է, որ Վազգեն Սարգսյանը պայքարել է պետության եւ պետականության համար: Սա շատ կարեւոր արձանագրում է: Տեսանյութում հիշատակվեց Անդրանիկ Օզանյանը, խոսվեց նրա ողբերգության մասին: Համոզված եմ բոլորս գիտենք, որ հենց Վազգեն Սարգսյանն է եղել Անդրանիկ Օզանյանի աճյունը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու նախաձեռնողը: Իսկ ինչո՞ւ էր դա այդքան կարեւոր նրա համար: Մի շատ կարեւոր պատճառով, որովհետեւ Վազգեն Սարգսյանը գիտեր, թե որն է Անդրանիկ Օզանյանի ողբերգությունը: Անդրանիկ Օզանյանի ողբերգությունն իրականում ազգային ազատագրական պայքարի զորավարի եւ պետականության դիտարկման մեջ էր: Այո՛, տեսանյութի մեջ հիշվեց, որ Անդրանիկ Օզանյանն ի վերջո ստիպված եղավ հեռանալ: Ինչո՞ւ ստիպված եղավ հեռանալ, որովհետեւ ինքը չկարողացավ իր տեղը գտնել պետության եւ պետականության պայմաններում: Վազգեն Սարգսյանն Անդրանիկ Օզանյանի աճյունը վերադարձրեց ոչ թե Հայրենիք, այլ վերադարձրեց Պետություն, որովհետեւ Վազգեն Սարգսյանն ուզում էր ֆի-

դային եւ պետության հաշտությունը: Եկեք ասենք՝ առանց երկրապահության եւ երկրապահի մենք անկախություն չէինք ունենա: Բայց երկրապահի արյունով ձեռք բերված անկախության, խաղաղության եւ պետականության հարաբերություններում, իհարկե, կան խնդիրներ: Մենք, հատկապես, մեզք կգործենք Վազգեն Սարգսյանի եւ մեր բոլոր ընկած եղբայրների առաջ, եթե դրա մասին չխոսենք: Վազգեն Սարգսյանը, զորավար Անդրանիկի աճյունը բերելով Հայաստանի Հանրապետություն, պետական արարողակարգով նրա հուղարկավորությունը կազմակերպելով, անկախության հիմքում ընկած, անկախության համար կյանքը տված նախնիների պանթեոնում՝ այդ հաշտությունն էր ուզում, այդ հաշտությունն էր փնտրում, ավելի ճիշտ կլինի ասել՝ ներդաշնակությունը: Դա էլ եկեք հասկանանք՝ մոտավորապես 3 մլն մարդ քվեարկել էր անկախության օգտին, բայց Վազգեն Սարգսյանն ստիպված էր փնտրել 500 մահապարտ: Եկեք այս հարաբերակցությունը հասկանանք: 3 մլն «այո» քվեարկած մարդ է 500 մահապարտի անհրաժեշտություն: Եվ սա էլ պետք է հասկանանք»:

Հարունակությունը՝ էջ 3



# «Վազգեն Սարգսյանի անունից պիտի չվախենանք ասել՝ Զայրենիքը Պետությունն է, եւ Պետությունը Զայրենիքն է»

սկիզբը՝ էջ 2

«Ես հաճախ եմ մեր քննարկումներում ասում,- շարունակել է Վարչապետը,- որ պետությունը հիմնվում է հանուն այդ պետության սեփական կյանքը տալու պատրաստակամության վրա: Եթե չկա այդպիսի պատրաստակամություն՝ չի կարող լինել պետություն: Բայց մյուս կողմից, շատ կարեւոր է սրա շարունակությունը, որովհետեւ պետությունը մի տեղ չէ, որտեղ մարդիկ պետք է մահանան, պետությունը մի տեղ է, որտեղ մարդիկ պետք է ապրեն: Անկախությունը նրա համար չէ, որ մարդն անընդհատ մահանա այդ անկախության համար, անկախությունը նրա համար է, որ մարդն ապրի, լինի անկախ, լինի պաշտպանված, լինի երջանիկ, լինի բարեկեցիկ:

Ինձ պատիվ է ընծանվել աշխատել եւ մտածել այն աշխատասենյակում, ուր սպանվելուց մի քանի ժամ առաջ նստած աշխատելիս է եղել Վազգեն Սարգսյանը: Եվ ես հիմա պիտի մի բան ասեմ, որ շատ եմ մտածել, ոչ մի անգամ չեմ բարձրաձայնել: Իհարկե, Սասուն Միքայելյանը խոսեց հոկտեմբերի 27-ի մասին, հոկտեմբերի 27-ի սպանությունը, ահաբեկությունը բացահայտելու մասին: Դա իրավապահների գործն է, եւ համոզված եմ, որ ամեն հնարավոր կարգի դրա համար: Բայց, թույլ տվեք

ծեղ հետ կիսել իմ համոզումները, թե ինչու է սպանվել Վազգեն Սարգսյանը:

Իմ համոզումներն այն է, որ Վազգեն Սարգսյանը սպանվել է, որովհետեւ, նախ, հասկացել էր անհրաժեշտությունը, բայց նաեւ վերջնական որոշում էր կայացրել ազգային ազատագրական պայքարը վերածնունդի դարձնել պետականակերտման պայքար, պետության պայքար, պետության ինստիտուցիոնալ կայացման պայքար, պետության հզորացման պայքար, որովհետեւ մենք երբեմն չենք հասկանում, եւ սա է մեր մեծագույն խնդիրը, մեր իրականության մեջ միշտ չէ, որ Պետությունը եւ Զայրենիքը ընկալվում են նույն կերպ: Եվ այդ ընկալումների ճեղքումն է, որ ի հայտ են բերում մեր բոլոր պարտությունները: Մենք պետք է նույնացնենք Զայրենիք եւ Պետություն հասկացությունները, որովհետեւ Պետությունը շատ կոնկրետ է, եւ եթե Զայրենիքը Պետությունն է, ցանկացած ուրիշ Պետություն կարող է դառնալ Զայրենիք:

Ցանկանում եմ կրկին շնորհավորել բուլղոսի Երկրապահ կամավորականների միության 30-ամյակի առիթով: Բայց ուզում եմ ասել, որ այն փոփոխությունը, որ տեղի ունեցավ Վազգեն Սարգսյանի մտածողության մեջ, երբ խոսում եմ Վազգեն Սարգսյանի մասին, միայն իր մասին չեմ խոսում, որովհետեւ այդ փոփոխությունը բերեց

շատ ավելի լայն փոփոխությունների, որովհետեւ դարակազմիկ մարդու մասին ենք խոսում: Բայց 1999 թվականին այդ մտածողության փոփոխության ընթացքը կանգ առավ, որովհետեւ մի անգամ փոփոխված մտածողությունը նույնքան արդիական չէ 10, 15 տարի հետո, որովհետեւ աշխարհը փոխվում է, եւ մտածողությունն էլ պետք է աշխարհի հետ փոխվի սեփական ակունքներից չկտրվելով: Ես դա համեմատում եմ հրթիռի թռիչքի հետ: Երբ հրթիռը պոկվում է երկրից, մի որոշակի բարձրության առաջին աստիճանի վրա նրա շարժիչները պոկվում են, բաց են թողնվում, որովհետեւ եթե այդ նույն շարժիչները նույն բանաձեւով մնան այդ հրթիռի վրա, այն մի կետի վրա կկանգնի եւ կընկնի: Այդ առաջին աստիճանի հրթիռները բաց են թողնվում, որպեսզի միանան երկրորդ աստիճանի հրթիռները, որպեսզի ապահովվի առաջընթացը, որպեսզի հաջորդ փուլում արդեն միանան երրորդ աստիճանի հրթիռները, որոնք հրթիռը կհասցնեն նպատակային կետի: Սա մտածողության փոփոխության հետ եմ զուգահեռ տանում: Վազգեն Սարգսյանը մեր առաջին աստիճանի հրթիռն էր, բայց որը նույնիսկ այն կետում չթողեց, որովհետեւ, իհարկե, ժողովրդավարական երկրում ոչ մեկ հավերժ չէր կառավարելու:

Եվ շատ կարեւոր է, որ մենք այս ընթացքը շարունակենք եւ այն շարունակում ենք մենք: Այն մեծամասշտաբ բարեփոխումները, որ տեղի են ունենում բանակում, Ձիմված ուժերում, դրանք Վազգեն Սարգսյանի անվան բարեփոխումներն են, մենք այդպես չենք անվանում, բայց ես ուզում եմ մեր բուլղոս ուշադրությունը հրավիրել հետեւյալի վրա. այսօր Զայրենիքի Գանրապետությունում Ձիմված ուժերում մի մարմին կա, որն անվանակոչված է Վազգեն Սարգսյանի անունով, դա Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանն է:

Սա հաջորդ ամենաուժեղ ուղերձն է: Զայրենասիրությունը, էնոցիան շատ կարեւոր են, բայց 21-րդ դարում հայրենասիրությունը կթուլանա՝ առանց գիտելիքի, էնոցիան ինքն իր դեմ կշրջվի՝ առանց գիտելիքի: Մենք պետք է կարողանանք այս ճանապարհը շարունակել եւ այդ ճանապարհին հիշել այս ուղերձը, որն Անկախության մասին է, որն ինքնիշխանության մասին է, որը Պետության մասին է: Եվ մենք Վազգեն Սարգսյանի անունից պիտի չվախենանք ասել՝ Զայրենիքը Պետությունն է, եւ Պետությունը Զայրենիքն է: Ընդհանրապես եմ բոլորի՞ն Երկրապահ կամավորականների միության 30-րդ տարեդարձի առիթով, կեցցե՛ Զայրենիքի Գանրապետությունը»:



Հաջորդիվ ԵԿՄ նախագահ Սասուն Միքայելյանը մի խումբ երկրապահների հանձնել է ԵԿՄ 30-ամյակին նվիրված հրեյանական մեդալներ: Զետմահու պարզեատրվել են նաեւ սպարապետ, ԵԿՄ հավերժ նախագահ Վազգեն Սարգսյանը եւ միության ակունքներում կանգնած բազմաթիվ երկրապահներ:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ԵԿՄ 30-ամյակի առթիվ այցելել է նաեւ Եռաբլուր գինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցել սպարապետ Վազգեն Սարգսյանի եւ զորավար Անդրանիկ Օզանյանի հիշատակին:

### Հաստատվել են կլինիկական օրդինատուրայի եւ ինտերնատուրայի ընդունելության տեղերը

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել են 2023-2024 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար), առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի (ըստ մասնագիտությունների) եւ ինտերնատուրայի ընդունելության տեղերը:

ԿԳՄՍ նախարարությանը լիազորվել է համապատասխան նախարարությունների կամ ուսումնական հաստատությունների հայտերի հիման վրա՝ տրամադրված տեղերի շրջանակում, իրականացնել թափուր մնացած տեղերի վերաբաշխում:

Համաձայն հիմնավորման՝ առողջապահության ծառայությունների մատուցման եւ բժշկական օգնության որակի բարձրացման համար կարեւոր գործոն է համակարգը բարձր որակավորմամբ մասնագետներով համալրելը, ինչպես նաեւ մարդկային ճեղքի հավասարաչափ բաշխումը՝ Երեւանում եւ մարզերում:

ՀՀ պաշտպանության եւ Առողջապահության նախարարություններից եւ Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանից ստացված հայտերի հիման վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը, ըստ մասնագիտությունների, ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացրել պետության կողմից ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի եւ ինտերնատուրայի ընդունելության տեղերը:

Կլինիկական օրդինատուրայի կրթական ծրագրով ուսումնառության անվճար տեղերի հատկացումը նպատակ ունի կանոնակարգել ուսումնական հաստատություններում առկա ուսուցմամբ կլինիկական օրդինատուրայի ընդունելությունը, ինչպես նաեւ նպաստել բժշկական կարգային ներուժի պատրաստմանն ու ՀՀ զինված ուժերում բժշկ-սպաների եւ մարզային առողջապահության կարգային պահանջարկի համալրմանը:

Կլինիկական օրդինատուրայում տեղերի հատկացումը հնարավորություն է ընձեռում ապահովել շարունակական կրթությունը, ինչպես նաեւ առողջապահության համակարգում առանցքային մասնագիտություններով բժշկ-մասնագետների փոխարինելիությունն ու բժշկական օգնության եւ սպասարկման մատուցման կայունությունը:

Ինտերնատուրայում տեղերի հատկացումը նախատեսում է կարգավորել ՀՀ զինված ուժերում առկա բժշկական կազմի թերհամալրվածության խնդիրը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը հատկացվել է օրդինատուրայի 10 տեղ, Առողջապահության նախարարությանը՝ օրդինատուրայի՝ 58, Պաշտպանության նախարարությանը՝ օրդինատուրայի՝ 16 իսկ ինտերնատուրայի՝ 70 տեղ:

Այսպիսով՝ որոշման ընդունումը պաշտպանության եւ առողջապահության ոլորտների համար կապահովի բարձր որակավորմամբ անհրաժեշտ բժշկական կարգերի համալրումն՝ ըստ համապատասխան մասնագիտությունների:





Մշակույթ

«Կյանքը ասի մեջ»

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ծրագրեր» անվանակարգով 2023 թ. դրամաշնորհային մրցույթին հավանության արժանացած «Կյանքը ասի մեջ» խեցեգործական և մանրանկարչական հնտությունների փոխանցում» ծրագիրն ամփոփվել է ցուցահանդեսով:

Ցուցադրությունը տեղի է ունեցել 44-օրյա պատերազմի հետեւանքով տեղահանված արցախցիների համար բացված խեցեգործության «Կերամաշար» արվեստանոց-ուսումնարանում:

Ծրագիրն իրականացվել է «Գոյ» մարդասիրական հիմնադրամի նախաձեռնությամբ: Նախագծի ընթացքում դասավանդվել են ոչ նյութական մշակութային ժառանգության երկու ուղղություններ՝ խեցեգործություն և մանրանկարչություն: Մանրանկարչության 20 և խեցեգործության 7 եռամսյա դասընթացներին մասնակցել է 15 շահառու: Մանրանկարչության դասընթացին



մասնակիցները սովորել են հայկական մանրանկարչական գծագրում, գունադրում, գունազարդում: Նրանք ծանոթացել են հայկական զարդանախշերի և գծա-

մախշերի պատմությանը, խորհրդին ու իմաստաբանությանը, ինչպես նաև տիրապետել են թղթի, կերամիկայի և մագաղաթի վրա նկարելու հնտություններին ու

տեխնիկային: Խեցեգործական հնտությունների փոխանցման դասընթացներին տարբեր տեխնիկաների կիրառմամբ ծրագրի անդամները պատրաստել են կավե ասիներ, սալիկներ, դեկորատիվ իրեր և զարդեր, ինչպես նաև հղկել են այդ իրերը, նկարել, գունազարդել և ջնարակել:

Դասընթացներին ուսուցողական հոլովակներ են պատրաստվել, որոնց կարելի է ծանոթանալ <https://tinyurl.com/3dm3wtds> հղումով:

Ծրագրի նպատակն էր Կիլիկյան և Արցախ-Ուտիք մանրանկարչական դպրոցների շեշտադրմամբ ձեւավորել մանրանկարված խեցե սպասքի և դեկորատիվ կիրառական առարկաների նոր դպրոց, բերնդավորել վերջինիս արտադրանքը, ապահովել տեղահանված արցախցի արվեստագետներին ստեղծագործական ինքնարտահայտման հարթակով և իրենց կարողությունների փոխանցման համապատասխան միջավայրով:

«Չպատմված պատմություններ»

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ծրագրեր» անվանակարգով 2023 թ. դրամաշնորհային մրցույթին հավանության արժանացած «Չպատմված պատմություններ» ծրագիրն ամփոփվել է երեխաների նկարչական ցուցահանդեսով:

Ծրագիրն իրականացվել է «Սեւան» երիտասարդական ակումբ» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ: Ծրագրի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեւան և հարակից Գավառ, Սարտուհի, Վարդենիս, Ճամբարակ խոշորացված համայնքներում կազմակերպության երիտասարդները բանահյուսական նյութեր են գրանցել համայնքի 44 տարեցներից: Գրանցված բանահյուսական նյութերից 10-ը (հեքիաթներ, ավանդազրույցներ, պատմություններ) տեղ են գտել էլեկտրոնային <https://tinyurl.com/38wppytn> գրքույկում:

Ծրագրի բաղկացուցիչ մասն էր Սեւանի, Գավառի, Սարտուհանի, Վարդենիսի ու

Ճամբարակի արվեստի դպրոցների տարբեր տարիքի 41 սաների նկարչական աշխատանքների ցուցահանդեսը: Միջոցառումն անցկացվել է Սեւանի Սուրեն Զաքարյանի անվան համայնքային մշակույթի կենտրոնի սրահում: Մինչ ցուցահանդեսը սաները ծանոթացել էին հեքիաթներին, ավանդազրույցներին ու պատմություններին, բանավոր ներկայացրել դրանք, այնուհետև վերարտադրել նկարազարդումներում: Երեխաների բանավոր պատմություններին կարելի ծանոթանալ հետեւյալ հղումով <https://tinyurl.com/ymt626ey>:

Ծրագրի նպատակն էր բացահայտել, գրի առնել, համայնացնել և ժամանակակից թվային միջոցներով համարառնական Գեղարքունիքի տարածաշրջանին հատուկ բանահյուսության նմուշները: Այն միտված էր ապահովելու Սեւանի ավազանի համայնքների ոչ նյութական մշակութային ժառանգության կենսունակությունն ու փոխանցումը, համայնքային համագործակցությունը, սերունդների միջեւ փոխադարձ կապն ու ժառանգության արժեւորումը:



Համահայկական

Նպատակը՝ սփյուռքի դպրոցները մեկ աղբյուրից սնելն է

Սեկնարկել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի» 2023 թ. փուլը: Հուլիսի 3-ից 18 երկրի 60 սփյուռքահայ ուսուցիչ վերապատրաստվում է 7 տարբեր ծրագրերով՝ «Ուսուցում մանկապարտեզում», «Ուսուցում մեկօրյա դպրոցում», «Տարրական ուսուցում», «Հայոց լեզվի և գրականության դասավանդում», «Հայոց պատմություն և մշակույթի պատմություն», «Պարարվեստ», «Տնօրենների վերապատրաստում»:

«Ծրագրի հիմնական խնդիրը կրթադաստիարակչական և մանկավարժական մեթոդների միասնական մոտեցում ունենալն ու սփյուռքին մեկ աղբյուրից սնելն է: Սեր նպատակն է Հայաստանում ձեռք բերված մանկավարժական գիտելիքը, մեթոդական, կիրառելի գործիքները փոխանցել նաև սփյուռքում աշխատող մեր գործընկերներին», - նշել է ԿԳՄՍ արտաքին կապերի և սփյուռքի վարչության սփյուռքի հետ կապերի բաժնի պետ Կարեն Մնացականյանը:

Վերապատրաստման ծրագրին այս տարի դիմել է 167 ուսուցիչ, որոնցից ընտրվել է 60-ը՝ տարբեր սկզբունքներով: Կարեն Մնացականյանի տեղեկացմամբ՝ ամենաշատ դիմողներ եղել են Ռուսաստանի Դաշ-

նությունից՝ պայմանավորված հայ համայնքի մեծությամբ. «Շուրջ 60 հոգի դիմել է միայն Ռուսաստանից: Այս տարի մեզ զարմացրեց Հնդկաստանի հայ համայնքը, որը թեև փոքր է, բայց մեծ հետաքրքրության է ակտիվ գործունեության արդյունքում եւս դիմել է ծրագրին և ընտրվել»:

Դիմողների ընտրության սկզբունքներից են մասնագիտական աշխատանքային փորձի առկայությունը, ինչպես նաև ԿԳՄՍ վերապատրաստման ծրագրերում վերջին 3 տարի ընդգրկված չլինելու համաձայնքը:

«Մեր խնդիրը ոչ թե մասնագետ պատրաստելն է, այլ մասնագետներին մեթոդական աջակցություն տալը», - եզրափակել է Կարեն Մնացականյանը:

Մասնագիտությամբ շինարար-ինժեներ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արմեն Պողոսյանն էլ եկել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Ջորջիա նահանգի Ատլանտա քաղաքից մասնակցելու ծրագրի «Տնօրենների վերապատրաստում» դասընթացին՝ որպես հայկական մեկօրյա դպրոցի տնօրեն: «Դպրոցը ստեղծվել է 2021 թ. սեպտեմբերի 12-ին: Այս պահին դասավանդում ենք հայոց լեզու՝ գրել, կարդալ, պատ-

մություն և երգ: Պլանավորում ենք ավելացնել նաև պարը», - ասում է Ատլանտայի հայկական դպրոցի տնօրենը: Նրա խոսքով՝ դպրոցի ստեղծման սկզբնական փուլում եղել են դժվարություններ, որոնք, սակայն, դարձել են հաղթահարելի Հայաստանի հետ կապը պահելու արդյունքում: ԿԳՄՍ նախարարությունն ապահովել է գրականությունը և անհրաժեշտ նյութերով, իսկ հաջորդ քայլը պետք է լիներ վերապատրաստման ծրագրին մասնակցելը:

«Դպրոց այս պահին հաճախում է 4-14 տարեկան 25 աշակերտ՝ 3-խմբով, որոնց դասավանդում է 4 ուսուցիչ: Համայնքը փոքր է, բայց զարգացող, և հույս ունենք՝ թիվը կմեծանա», - ասում է Արմեն Պողոսյանը: Փաստելով, որ ոչ միայն ծնողները, այլև հենց երեխաներն են շահագրգռված հաճախել դպրոց նա հիշում է. «Կային երեխաներ, որոնք այլևս չէին գալու դպրոց, որովհետև ծնողը ծանրաբեռնված էր և չէր հասցնում: Այդուհանդերձ, երեխաները պարտադրեցին ծնողներին չընդհատել իրենց ուսումը և շարունակեցին հաճախել դպրոց»:

Քրիստին Սարաշյանը, որը «դասական» սփյուռքից է, ներկայացնում է Լիբանանի Միխթարյան վարժարանը, վերա-

պատրաստվում է «Ուսուցում մանկապարտեզում» ծրագրով: Դպրոցն ամենօրյա է, տարբեր խմբերում հաճախում են 15-20 աշակերտ: «Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը բարելավում է մեր գիտելիքը և մանկավարժական գործունեության որակը: Մենք ոչ միայն տեսական, այլև գործնական գիտելիք ենք ձեռք բերում, ինչն անմիջապես կապում ենք մեր դպրոցական ծրագրին», - ասում է Քրիստին Սարաշյանը և հավելում, - գիտելիքից զատ՝ շատ կարևոր է աշխարհի մյուս ծայրում ապրող և դասավանդող մեր գործընկերների հետ փորձի փոխանակումը, ինչի շնորհիվ նոր հնտություններ ենք ձեռք բերում, տարբեր իրավիճակների ենք ծանոթանում»: Լիբանանահայ ուսուցիչը վստահ է՝ կվերադառնա սփյուռք գիտելիքի մեծ պաշարով, և հայրենիքի հետ շփմամբ հարստացած, որը կծառայի ի նպաստ համայնքի և դպրոցի զարգացման:

Սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակում, բացի բուն դասընթացներից, մանկավարժների համար կազմակերպվում են այցեր պատմամշակութային վայրեր և մշակութային օջախներ:



# Գործունեության պատմական նշանակությունը

սկիզբը՝ էջ 7

Գիտական կոնֆերանսի աշխատանքներին ակտիվորեն մասնակցեցին եւ հետաքրքիր զեկուցումներով հանդես եկան ՀԿՄ երաժշտագիտական մասնաճյուղի անդամները: ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **ԱՃՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ** քննության առավ հայ խմբերգային արվեստը Քրիստափոր Կարա-Մուրզայից մինչեւ Հովհաննես Չեփչյանի զեկուցման ավարտին ներկայացնելով Կարա-Մուրզայի «Լեպիտ, լե, լե» նշանավոր խմբերգի չեփչյանական մեկնաբանության տեսագրությունը:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի «Երաժշտական Հայաստան» գիտական պարբերականի գլխավոր խմբագիր, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության անդամ, երաժշտագետ **Գոհար Շագոյանը** բացահայտեց Գրիգոր Փիտեղյանի ներդրումը Քրիստափոր Կարա-Մուրզայի ժառանգության ուսումնասիրության եւ հանրահռչակման գործում:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյանի** զեկուցումը նվիրված էր Քրիստափոր Կարա-Մուրզայի բազմաձայն «Պատարագի» ուսումնասիրությանը:



Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Կրթության որակի ներքին ապահովման բաժնի վարիչ, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Նարինե Ավետիսյանը** ուրվագծեց Քրիստափոր Կարա-Մուրզայի գործունեությունը դարաշրջանի համատեքստում:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանը** «Նշանավոր դրամատիկայի Քրիստափոր Կարա-Մուրզա եւ Անդրեաս Քաղցածյան» բանախոսության մեջ նկատեց, որ թեւեւ ճնշված Ղարաբաղ-Քաղաքից երկու գործիչներին բաժանում էր շուրջ կես դար, սակայն հենց

Ա.Քաղցածյանի գործունեությունը նպատեց, որպեսզի ծիլ տա եւ աճի Բ.Կարա-Մուրզայի հանճարը: Ա.Քաղցածյանը յուրացրել էր Հ.Լիմոնջյանի հայկական նոր նոտագրության համակարգը, հայրենի քաղաքում ստեղծել էր եկեղեցական երգչախումբ, ծայնագրել, ապա քառաձայն մշակմամբ կատարել հոգեւոր երգեր, իսկ 1853 թ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ծովակալ Պ.Նախիմովի տարած մեծ հաղթանակի կապակցությամբ գրել էր «Սիմոսի քայլերգ»-ը:

Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյուլնուր մասնաճյուղի տնօրեն, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, արվեստագի-

տության թեկնածու, դոցենտ **Հասմիկ Հարությունյանը** ներկայացրեց Բ.Կարա-Մուրզայի գործունեությունն Ալեքսանդրապոլի քաղաքային երաժշտական մշակույթի համատեքստում:

Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին նաեւ երիտասարդ հետազոտողներ: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի **Լինդա Սարգսյանը** ներկայացրեց Մաթեոս Մուրադյանի ներդրումը Քրիստափոր Կարա-Մուրզայի գործունեության ուսումնասիրության գործում, իսկ Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու երգեհոնահար, Երեւանի Ռ.Մելիքյանի անվան երաժշտական քոլեջի խմբավարությամբ բաժնի վարիչի պաշտոնակատար եւ երգչախմբի խմբավար **Գրիգոր Հարությունյանը** քննության առավ թաշտանական Պատարագի երգասացությունները Քրիստափոր Կարա-Մուրզայի եւ Մակար Եկնայանի Պատարագներում:

Գիտական կոնֆերանսի արդյունքները կարելու էր հանգրվան դարձան Կարա-Մուրզայի ստեղծագործության եւ գործունեության ուսումնասիրության ճանապարհին:

**ԱՃՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն,  
ՀԿՄ երաժշտագիտական մասնաճյուղի ղեկավար,  
արվեստագիտության դոկտոր,  
պրոֆեսոր

## «Մեկնարկ»

# Տաղանդի զարգացման նպատակային ծրագրի գործունեությունը՝ 2023 թվականի 1-ին կիսամյակում

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Հարմոնիում» ՀԿ-ն (զեկարվեստական ղեկավար՝ դաշնակահար, ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր **Արմեն Բաբախանյան**) իրականացնում է «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիրը:

Ծրագիրն ընդգրկված է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում»:

Ծրագրի նպատակն է պատանի տաղանդավոր երաժիշտ-կատարողների բացահայտումը, նրանց մասնագիտական կարողությունների զարգացումը, հանրային ճանաչելության բարձրացումը, մասնակցության ապահովումը հանրապետական եւ միջազգային երաժշտական մրցույթներին, փառատոներին եւ այլ նախագծերին, ավագ սերնդի փորձի փոխանցման լիարժեք պայմանների ստեղծումը:

«Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիրն ուղղված է 11-20

տարեկան առավել տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների (դասական երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ) զարգացմանը, կատարելագործմանը եւ խրախուսմանը՝ հետագայում միջազգային ասպարեզում հայկական կատարողական արվեստը ներկայացնելու նպատակով:

Նշենք, որ 2023 թվականի հունվար-հունիս ամիսներին ծրագրում ընդգրկվել են 15 տաղանդավոր երիտասարդ երաժիշտ-կատարող եւ 6 առաջատար մասնագետ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ մասնագիտություններով:

2023 թվականի 1-ին կիսամյակում «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի 8 շնորհալի երեխաներ մասնակցել են 13 երաժշտական միջազգային մրցույթների եւ արժանացել 1-ին եւ 2-րդ մրցանակների:

Ծրագրի անդամները մի շարք վարպետության դասեր են ստացել աշխարհի այնպիսի լավագույն մասնագետներից, ինչպիսիք են՝ **Անդրեյ Մալոֆեյեւը** (ՌԳ), **Պաս-**

**կալ Գոդարը** (Ֆրանսիա), **Թամաշ Ունգարը** (ԱՄՆ), **Անդրե Սեվերինը** (Յուգոսլավիա), **Քրիստոֆ Բարատտին** (Իտալիա), **Ջոշուա Բելը** (Անգլիա), **Ջախար Բրոնը** (Շվեյցարիա) եւ այլոք:

2023 թ. առաջին կիսամյակում ծրագրի անդամները մասնակցել են նաեւ «Վարպետության դաս. մեկնարկ» ծրագրի շրջանակում իրականացված 6 վարպետության դասերի, որոնք անցկացրել են հայաստանյան եւ արտերկրի մասնագետները: Վարպետության դասերն անցկացրել են Brescia Classica (Իտալիա) եւ Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթների դափնեկիր **Հռիփսիմե Աղաբաղյանը** (դաշնամուր), միջազգային մրցույթների դափնեկիր **Արմեն-Լեւոն Մանասերյանը** (դաշնամուր), Բախի միջազգային մրցույթի (Լայպցիգ), Վալենտինո Բուկկիի անվան միջազգային մրցույթի (Հռոմ) դափնեկիր **Դավիթ Մելքոնյանը** (թավջութակ), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր **Սերգեյ Քեչեկը** (դաշնամուր), միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ ֆիլհարմոնիկ նվագախմբի

կոնցերտմաստեր, ջութակահար **Արամ Ասատրյանը** (ջութակ) եւ Շվեյցարիայի Լոզան քաղաքի կոնսերվատորիայի դաշնամուրային դեպարտամենտի ղեկավար, պրոֆեսոր Պասկալ Գոդարը: «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի անդամները վարպետության դասերի շրջանակում մասնակցել են նաեւ 7 համերգի:

Ծրագրի 3 անդամ մասնակցել է Բյուզենդորֆեր փառատոնի երկու համերգների՝ Ավստրիայում: Ծրագրի 1 անդամ, որպես մենակատար, ելույթներ է ունեցել ՌԴ Մոսկվա եւ Սանկտ-Պետերբուրգ քաղաքներում, 2 անդամ՝ համերգներով ելույթներ ունեցել Ֆրանսիայում, իսկ 2 անդամ՝ ելույթներ ունեցել Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի հետ: Ծրագրի 1 անդամ մասնակցել է Սամարայում անցկացվող ամառային ակադեմիային, 6 անդամներ՝ Կապանի միջազգային երաժշտական փառատոնին, իսկ 1 անդամ համերգներով ելույթ է ունեցել ԱՄՆ-ում: Ծրագրի եւս մեկ մասնակից Շվեյցարիայում մասնակցել է Ջախար Բրոնի ակադեմիայի վարպետության դասերին:





Ճանաչիր, որ սիրես

Գոշավանք (Նոր Գետիկ վանք, Գետկավանք) եւ Յաղարծին (Յաղարծնի վանք)

ՀՀ Տավուշի մարզի Գոշ գյուղը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1080 մ բարձրության վրա, մարզկենտրոն Իջևանից մոտ 30 կմ հարավ-արևմուտք, իսկ քաղաքամայր Երեւանից մոտ 120 կմ (դեպի հյուսիս-արեւելք) հեռավորության վրա:

Գոշ գյուղից հարավ-արեւելք՝ Գետիկ գետի աջափնյա ձորալանջին, գտնվում է հայկական միջնադարյան ճարտարապետության գոհարներից մեկը՝ Գոշավանքը: Գոշավանքը միջնադարյան Հայաստանի հոգեւոր եւ կրթակա-մշակութային խոշոր կենտրոններից էր: Գոշավանքը 1188 թ. իշխան Իվանե Չաքարյանի աջակցությամբ հիմնադրել է Մխիթար Գոշը՝ 1186 թ. երկրաշարժից ավերված Գետիկ վանքի մոտակայքում եւ այստեղ տեղափոխել միաբնությունը: Սկզբում կոչվել է Նոր Գետիկ, իսկ Մխիթար Գոշի մահվանից (1213 թ.) հետո, ի պատիվ վանքի հիմնադիր համբավավոր ուսուցչապետի, կոչվել է Գոշավանք:

Վանական համալիրի մաս կազմող հուշարձանները բաժանված են երկու խմբի: Ձորակի հյուսիսային լանջին տեղավորված է հիմնական խումբը՝ բաղկացած Սուրբ Աստվածածին, Սուրբ Լուսավորիչ, Սուրբ Գրիգոր եկեղեցիներից, ժամատնից, գրատուն-զանգակատնից, հավանաբար տնտեսական նշանակություն ունեցող մեկ շենքից, մատուռներից, պատվանդանավոր խաչքարերից: Այս խմբից հարավ-արեւելք՝ ձորակի հանդիպակաց լանջին, իրարից փոքր-ինչ վեր տեղավորված են Սուրբ Յաղարծին երկխորան եկեղեցին եւ մի ավերակ շենք, որը համարվում է Մխիթար Գոշի դամբարանը:

Ըստ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու՝ վանքի առաջին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հրաշագեղ փայտակերտ եկեղեցու օծմանը Յաղարծնի վանահայր Խաչատուր Տարոնացին Գոշավանքին նվիրել է երկու գյուղ եւ այգի: Բացի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց՝ Մխիթար Գոշի վանահայրության օրոք կառուցվել են նաեւ Սուրբ Յովհաննես Կարապետ փոքրիկ եկեղեցին (Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եւ Սուրբ Յովհաննես Կարապետ եկեղեցիները չեն պահպանվել) եւ Սուրբ Աստվածածին եկեղեցին ու իր գավիթը: Վանքի կառուցապատումը շարունակվել է մինչեւ XIII դ. վերջը:

Սուրբ Աստվածածին եկեղեցին Մխիթար Գոշը կառուցել է 1191–1196 թթ.: Հաջորդիվ Վախթանգ իշխանի եւ նրա եղբայրների օժանդակությամբ (ճարտարապետ՝ Մխիթար Յուսան): Եկեղեցին մեկ զույգ որմնամույթերով եւ «գմբեթավոր դահլիճ» տիպի հորինվածքով խաչազմբեթ կառույց է, ավագ խորանին կից ունի կրկնահարկ զույգ ավանդատներ, իսկ հարավային եւ արեւելյան պատերին՝ եռանկյունի զույգ խորշեր: Գլխավոր մուտքը գավթից է, մյուսը՝ հյուսիսային ճակատից: Եկեղեցու օծման արարողությունը տեղի է ունեցել 1197 թ.: Յաղարծնի վանահայր Յովհաննես Եպիսկոպոսի ներկայությամբ եկեղեցու օծման հանդիսությանը Չաքարյան իշխանները Գոշավանքին նվիրել են կալվածքներ, իսկ Վախթանգ իշխանի կին Արզուխաթունը՝ իր եւ դուստրերի գործած Փրկչի ու սրբերի պատկերներով վարագույր, որը, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, հիացրել է ամենքին: 1197–1203 թթ. Սուրբ Աստվածածին եկեղեցու արեւմտյան կողմին կից կառուցվել է քառասյուն, ծածկի կենտրոնում ութանիստ, երդիկավոր գմբեթով եւ կենտրոնակազմ հորինվածքով գավիթ (ճարտարապետ՝ Մխիթար Յուսան), որն արեւելյան անկյուններում ունի երկհարկանի ավանդատներ: XIII դ. սկզբին Մխիթար Գոշը կառուցել է վանքի Սուրբ Առաքելոց, Սուրբ Յովհաննես մատուռները եւ Սուրբ Յովհաննես փայտակերտ եկեղեցին, իսկ վանքի հա-

րավային բլրակի գագաթին՝ Սուրբ Յամբարձում մատուռ-դամբարանը, որտեղ էլ հետագայում հողարկավորվել է մեծ ուսուցչապետը (1213 թ.):

Սուրբ Աստվածածին եկեղեցու արտաքին հարդարանքը պարզ է: Ճարտարապետագեղարվեստական նշանակությամբ առանձնանում են արեւմտյան շքամուտքը եւ տարածական հորինվածքը պսակող մարմնեղ թմբուկի վերնամասով անցնող զարդագոտին:

Փոքրածավալ Սուրբ Գրիգոր եկեղեցին կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու հարավային կողմում, 1231 թ., Մարտիրոս եւ Գրիգոր եղբայրների օժանդակությամբ: Սուրբ Գրիգոր եկեղեցին «գմբեթավոր դահլիճ» տիպի կառույց է, որի շինարարությունն ընդհատվել է հորեզմի շահ Ջալալեդդինի (Ջալալ էդ-Դին) արշավանքների ժամանակ եւ ավարտվել Գրիգոր Կապալեցու ջանքերով:

Ամիրսպասալար Ավագ Չաքարյանի կառավարիչ Գրիգոր Տղա իշխանը 1237–1241 թթ. գավթի հարավային պատին գրեթե կից կառուցել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ միանավ թաղածածկ եկեղեցին, որին իր հարդարանքի արտակարգ ճոխության եւ նրբագեղության համար Կիրակոս Գանձակեցին անվանել է «գարմանակերտ»: Այս փոքրաչափ գողտրիկ եկեղեցին իր ժամանակներում քիչ հանդիպող միանավ բազիլիկ տիպի է՝ երկլանջ կտուրի տակ առնված թաղակապ ծածկով: Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին առանձնանում է Գոշավանքի ամբողջ համալիրում, քանզի եկեղեցու հարդարանքը հայկական միջնադարյան դեկորատիվ արվեստի ամենատպավորիչ ստեղծագործություններից է:

Վանահայր Մարտիրոսի օրոք (մինչեւ 1241 թ.) գավթից հյուսիս, նրան կամարակապ միջանցքով հաղորդակից, կոպտատաշ խոշոր քարերով կառուցվել են վանքի փայտածածկ գրատունը եւ նրան արեւմուտքից կից ժամատունը: Վանական համալիրի գրատուն-զանգակատունը կրկնահարկ, ճարտարապետական տեսակետից ուշագրավ հուշարձան է: Գրատունը կառուցվել է 1241 թ., զանգակատունը՝ 1291 թ.: Գրատունը նման է Յաղարծնի վանքի գրատանը, ունի քառակուսի հատակագիծ, հանդիպակաց ներքին պատերն իրար են կապված զույգ ցածրադիր որմնամույթերին հենված հուժկու կամարներով, որոնք, ներքին տարածության վերնամասում փոխադարձաբար հատվելով, կրում են գրատան ծածկը եւ նրա վերնաշենք-զանգակատունը: Գրատան ներսի պատերում կան խոր-



շեր՝ ձեռագրեր պահելու համար: Գրատան վրա հետագայում ավելացված զանգակատունը լիովին ներդաշնակում է գոյություն ունեցող ներքնահարկի հետ, եւ միասին հիմք են ծառայել կրկնահարկ եկեղեցի-դամբարանների (Նորավանքի Բուրթելաշեն, Եղվարդի Սուրբ Աստվածածին, Կապուտանի Սուրբ Մինաս) հատակագծային եւ ծավալատարածական հորինվածքի կազմավորման համար:

1254 թ. Մխիթար Գոշի դամբարանի մոտ Խաչատուր վարդապետը եւ Բարսեղը կառուցել են խորանարդածե ծավալով, գմբեթավոր Սուրբ Գեորգ փոքր եկեղեցին:

XIII դ. Գոշավանքում գործել է բարձրագույն դպրոց, որը պատմական աղբյուրներում անվանվել է վարդապետարան, ճեմարան: Գոշավանքում ստեղծվել եւ ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր, որոնք պահվել են վանքի գրատանը:


XIII դ. Գոշավանքը ստացել է բազում նվիրատվություններ՝ գյուղեր, այգիներ, վարելահողեր, անտառներ, ջրաղացներ, դրամ, զրքեր եւ այլն: 1242–1250 թթ. Չաքարյան իշխաններն իրենց սեփականություն հանդիսացող Գոշավանքը, կալվածքներով հանդերձ, վաճառել են Կարինից Արեւելյան Հայաստան տեղափոխված ժամանակի նշանավոր հարուստներից մեկին՝ պարոն Ունեկին, որի ժառանգները մինչեւ

XIV դ. կեսը տիրել են վանքին: 1260 թ. Գոշավանքն ազատվել է եկեղեցական տուրքից: 1291 թ. վարդապետ Դասապետը եւ իր եղբայր Կարապետը, ճարտարապետներ Չաքիոսի ու Գրիգորի հետ միասին, գրատան փայտե ծածկը փոխարինել են երկու զույգ խաչվող կամարներ ունեցող համակարգով: Նրանք որպես երկրորդ հարկ կառուցել են Սրբոց Յրեշտակապետաց խաչածե հատակագծով եկեղեցին եւ նրա վրա՝ սյունազարդ զանգաշտարակ (չի պահպանվել):

Գոշավանքի համալիրի բաղկացուցիչ մասն են կազմում գեղաքանդակ խաչքարերը, որոնց շարքում առանձնանում են վարպետ Պողոսի կերտած «ասեղնագործ» նրբահյուս զույգ խաչքարերը՝ դրված Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արեւմտյան ճակատի առջեւ, մուտքի երկու կողմերում (հարավային խաչքարը 1935 թ. տեղափոխվել է Հայաստանի պատմության պետական թանգարան): Յուսիսային կողմի՝ տեղում մնացած խաչքարը, ըստ արձանագրության, 1291 թ. կանգնեցրել է Սարգիս վարդապետը:

XIV–XVI դդ. Գոշավանքում վանական կյանքն անկում է ապրել եւ վերստին աշխուժացել XVII դ.: XIX դ. վերջին վանքը դադարել է գործելուց: 1890-ական թթ. Սմբատ Փարսադանյանը նորոգել է Մխիթար Գոշի կառուցած Սուրբ Յովհաննես Կարապետ եկեղեցին: 1937 թ. նորոգվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու գմբեթը, 1939 թ.՝ Սուրբ Գրիգոր եկեղեցին, 1957–1966 թթ.՝ Սուրբ Գեորգ եւ Սուրբ Աստվածածին եկեղեցիներն ու գավիթը: 1958 թ. Մխիթար Գոշի դամբարանի մոտ նրան նվիրված հուշակոթող է կանգնեցվել, 1972 թ. բացվել է Գոշավանքի թանգարանը, իսկ 1978 թ.՝ բարեկարգվել վանքի տարածքը:

2013 թ. սեպտեմբերի 13-ին վանական համալիրի տարածքում բացվեց միջնադարի համաբարեղ մտածող, ուսուցչապետ, օրենսգետ ու առակագիր Մխիթար Գոշի բրոնզածույլ արձանը: Արձանի տեղադրման նախաձեռնությունը այդ գյուղի գավակ, ռուսաստանաբնակ գործարար Անտոն Մեիրաբյանինն էր (հեղինակ՝ քանդակագործ Գեորգ Գեորգյան): Արձանի բացման պատիվը վերապահվել էր Տավուշի մարզպետ Արմեն Դուլարյանին, Տեր Մարկոս Եպիսկոպոս Յովհաննիսյանին եւ բարերար Անտոն Մեիրաբյանին:



# Գոշավանք (Նոր Գետիկ վանք, Գետկավանք) եւ Յաղարծին (Յաղարծնի վանք)

սկիզբը՝ էջ 9

«Գոշավանք» պատմաճարտարապետական արգելոցը գործում է 1974 թվականից, իսկ 2003 թվականից գործում է որպես ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղ եւ ներառում է ՀՀ կառավարության կողմից 2004 թ. դեկտեմբերի 30-ի N 1929-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Տավուշի մարզի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված Գոշավանք վանական համալիրը: Գոշավանքն այժմ գործող վանք է:

## Ավանդապատում

Մխիթար Գոշի մասին ստեղծված բազում ավանդազրույցներից մեկը պատմում է, թե մի գիշեր երազում Մխիթար Գոշին է հայտնվում Աստված ու ասում է. «Մխիթար, ուշադիր ինձ լսիր, յոթ տարի շարունակ լինելու են բարեբեր, բերքառատ ու հացառատ ժամանակներ, այդ ընթացքում անհրաժեշտ է արդյունավետ ու համբերատար գործել, ամբարել հացահատիկի առատ պաշարներ, քանզի դրանց հաջորդող յոթ տարիներն էլ լինելու են անբարենպաստ, երաշտ ու սակավահաց տարիներ: Եթե խելամիտ ու արդյունավետ գործեք, ապա աղետալի եւ հացապակաս տարիներին ժողովուրդը մեղություն չի քաշի»: Կեսգիշերին արթնանալով՝ իմաստուն վարդապետը երկար մտորում է նոր տեսած երազի շուրջ, իսկ արեւածագին ոտքի ելնելով՝ անմիջապես գործի է անցնում: Նա պատվիրում է վանքի հարստությանը կառուցել մեծ-մեծ ու ապահով շտեմարաններ, որոնք յոթ բերքաշատ տարիներին լցվում են հացահատիկով: Երբ վրա են հասնում աղետալի տարիները, սովն ընկնում է ժողովրդի մեջ, Մխիթարը պատրաստել է տալիս մի գուշ, եւ այդ գուշով սկսում է հացահատիկ բաժանել ժողովրդին: Մխիթարի խոհեմության եւ արդարամտության շնորհիվ ժողովուրդը դիմանում է սովին, ու ոչ ոք սովամահ չի լինում: Ասում են, թե դրա համար է, որ նա ժողովրդի կողմից ստացել է Գուշ Մխիթար կամ Մխիթար Գոշ մականունը: Երբ երանելի գիտնականը կնքում է իր մահկանացուն, երախտագետ ժողովուրդը նրան մեծ պատիվներով հուղարկավորում է գյուղում, իսկ գյուղըն էլ կոչում են Գոշ կամ Գոշի գյուղ:

\*\*\*

Ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու՝ Մխիթար Գոշը, կյանքի երանելի ընթացքը կատարելով ու հավատը պահելով, հասավ խոր ծերության: Եվ երբ տեսավ, որ տկարացավ մարմնական գործողությամբ եւ պատրաստ է դրանից հետո գնալու ավելանալու իր հայրերին, կանչեց Նոր Գետիկ վանքի միաբանության անդամներին, որոնք իր հետ դիմացել էին վանքի ու եկեղեցու բոլոր դժվարություններին, եւ Տիրոջ անունով օրհնեց նրանց եւ իր աշակերտներին: Նրանցից Մարտիրոս անունով մեկին ընտրելով, որ աշակերտել էր իրեն ու մտերիմ էր իր հետ, նշանակեց նրանց առաջնորդ: Սա հասակով պատանի էր, բայց իմաստությանը՝ կատարյալ, պաշտամունքի երգերում քաղցրածայն մի մարդ էր, առատամիտ ընթերցող ու գրչության մեջ արագագիր. սրան հրամայեց առաջնորդել նրանց: Եվ կտակ գրեց՝ ուղղված մեծ հազարապետ Իվանեին՝ Ջաքարեի եղբորը, եւ նրան հանձնեց վանքն ու առաջնորդին, իսկ ինքն այս կյանքից փոխադրվեց Քրիստոսի մոտ ալելուրված ու տարիներով բեռնավորված: Վանքի վերակացու Մարտիրոսը միաբանների հետ գեղեցիկ կերպով կազմակերպեց նրա թաղման հոգեւոր ու մարմնական պատշաճ պիտույքները, եւ նրան տանելով

վանքի վերելում գտնվող փոքրագույն եկեղեցու դռան առաջ՝ արեւմտյան կողմում ամփոփեցին: Մինչեւ այսօր էլ նրա գերեզմանը օգնում է այն հիվանդներին, որոնք հավատով ապավինում են նրա աղոթքներին, եւ այդտեղի հողը միշտ տանում են հիվանդ մարդկանց ու անասունների բուժման համար, որովհետեւ Աստված փառավորում է իր փառավորիչներին՝ թե՛ ողջ, թե՛ մեռած:

Մի անգամ այնպես պատահեց, որ նրա սպասավորները վանքի պետքերի համար գինի բարձած գրաստներով գալիս էին: Բասիլա անունով ոմն վրացի եկավ ու կամենում էր բռնի կերպով նրանցից գինի առնել, որովհետեւ Իվանեի գործակալն էր անտառի վրա ու պահում էր նրա իջեւանատեղը: Սպասավորներն ասում են նրան. «Մեզ մեղություն մի տուր, որովհետեւ մենք Գոշի մարդիկ ենք»: Մականունով այսպես էին կոչում նրան, որովհետեւ շատ քիչ էին նրա մագերը: Իսկ այդ թշվառականը հայոյելով անարգեց նրան ու Գոշին: Երբ հասավ այն տեղը, ուր նրա անունը պետք է անարգանքով հիշատակեք, անմիջապես համրացավ, նրա լեզուն կապվեց, շրթունքները ծովեցին, եւ նա այդպես մնաց շատ օրեր, մինչեւ որ հառաչանքներով թողություն խնդրեց:

\*\*\*

Սեկ այլ ավանդություն էլ պատմում է, թե երբ բռնակալ Լենկ Թեմուրն իրեն հատուկ դաժանությամբ պահանջել է Գոշավանքից ու բնակիչներից հարստություն ու ոսկի, վանականներն ու գոշեցիները չեն վախեցել մեռնելուց, մահապատժի են ենթարկվել, սակայն բռնակալին ոչինչ չեն տվել: Կատաղել է Լենկ Թեմուրը եւ դիմել իր իմաստունների օգնությանը:

- Ո՛վ տիրակալ դու հզոր,- ասել են իմաստունները,- այս հայերը շատ հնուց մի սրբազան սովորություն ունեն, իրենց գավակների պես, այսինքն, սեփական կյանքից էլ առավել սիրում ու պաշտում են գիրքը: Դու հրամայիր, թող այստեղ մի մեծ խարույկ վառեն ու հավաքեն վանքի բոլոր ձեռագրերը: Կտեսնեք, թե ինչ կլինի:

Ազաի Լենկ Թեմուրն իսկույն հրամայում է մի մեծ խարույկ վառել ու բերել վանքի բոլոր ձեռագրերը: Գերեվարված վանականներն ու գյուղացիները լացակունամ են ողբալով ընկնում են բռնակալի ոտքերը, խնդրում, աղաչում, որ խղճա իրենց, խնայի ձեռագրերը՝ խոստանալով հանձնել իրենց մոտ եղած ամբողջ ոսկին, արծաթն ու գոհարեղենը: Ջարմանքից քար կտրեց, համրացավ բռնակալը, աչքերը չովեցին, բերանը բաց մնաց: Քիչ հետո սթափվեց ու հրամայեց. «Ո՛չ մի ձեռագիր թող չլնասսվի, իսկ ով կփորձի հակառակն անել, իսկույն ըմբոստին խարույկը նետեք: Ձեռագրերը բո-



Նոր հանձնեք դուք վանքին»: Այդպես հայերը կրկին փրկեցին իրենց կյանքից թանկ հին մատյանները:

\*\*\*

Գոշի լիճ: Գոշ գյուղից մոտ 2 կմ հարավարեւմուտք՝ սաղարթաշատ անտառների զովաւուն գրկում է տեղավորվել գողտրիկ Գոշի լիճը: Պատվարային լիճ է, առաջացել է սողանքային գործընթացների հետեւանքով: Լճի մակերեսային հայելին մոտ 0,008 քառ. կմ է, երկարությունը՝ մոտ 100 մ, լայնությունը՝ մոտ 80 մ: Առավելագույն խորությունը 8 մ է, ամբարված ջրի ծավալը՝ 1500 խորանարդ մետր: Սնվում է աղբյուրների եւ մթնոլորտային տեղումների ջրերով: Ամռանը ջրի ջերմաստիճանը մակերեսային հասնում է ընդամենը 14 աստիճանի (ըստ Ցելսիուսի): Մոտակայքում կարելի է հանդիպել զարմանահարաշ բնական հուշարձանների (ժայռեր, քարակարկառներ, համբային աղբյուրներ եւ այլն):

## Յաղարծնի վանք

ՀՀ Տավուշի մարզի Յաղարծին գյուղը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1050 մ բարձրության վրա, մարզկենտրոն Իջևանից մոտ 25 կմ հարավ-արեւմուտք, Դիլիջան քաղաքից մոտ 15 կմ հյուսիս-արեւելք, իսկ քաղաքամայր Երեւանից մոտ 110 կմ (դեպի հյուսիս-արեւելք) հեռավորության վրա:

Յաղարծին գյուղից մոտ 8 կմ հյուսիս-արեւմուտք՝ Աղստե գետի վտակ Յաղարծին

գետակի վերին հոսանքի շրջանում անտառապատ հրվանդանի վրա, գտնվում է հայկական միջնադարյան ճարտարապետության հրաշալիքներից մեկը՝ Յաղարծնի վանական համալիրը:

Յաղարծինը ծաղկում է ապրել XII դ. վերջին – XIII դ. սկզբին՝ վանահայր Խաչատուր վարդապետ Տարոնացու բեղմնավոր գործունեության շնորհիվ: Որպես XIII դ. առաջատար մշակութային-ուսումնագիտական կենտրոն Յաղարծինը հիշատակում են պատմիչներ Ստեփանոս Օրբելյանը, Կիրակոս Գանձակեցին եւ ուրիշներ:

Յաղարծնի վանական համալիրն ընդգրկում է չորս եկեղեցի, երկու գավիթ, (մեկը՝ ավերված), սեղանատուն, աղոթարաններ, խաչքարեր:

Հուշարձանախմբի հնագույն կառույցը Սուրբ Գրիգոր եկեղեցին է (մոտ X դ.): Եկեղեցին ներքուստ խաչածեւ, իսկ արտաքուստ՝ ուղղանկյուն, գմբեթավոր կառույց է: Չորս անկյուններում ունի ավանդատներ (արեւելյան կողմի երկու ավանդատներն առանձնացված չեն աղոթասրահից): 1184 թ. վանահայր Խաչատուր վարդապետ Տարոնացին եւ Սուրբ Խաչատուր մարտիրոսը Սուրբ Գրիգոր եկեղեցին 1194 թ. Սուրբ Գրիգոր եկեղեցու հյուսիսային կողմին կից կառուցվել է միանավթ թաղածածկ Կաթողիկե փոքր եկեղեցին: XII դ. վերջին Իվանե Ջաքարյանը Սուրբ Գրիգոր եկեղեցուն արեւմուտքից կից կառուցել է քառալուսն գավիթ:

1244 թ. Սուրբ Գրիգոր եկեղեցու արեւելյան կողմում կապտավուն բազալտից կառուցվել է նրբագեղ մանրամասներով Սուրբ Ստեփանոս գմբեթավոր եկեղեցին:

Յաղարծնի վանական համալիրի գլխավոր եկեղեցին՝ Սուրբ Աստվածածինը, մեկ գույգ մույթերով «գմբեթավոր դահլիճ (սրահ)» տիպի կառույց է, որի ճակատները (բացառությամբ արեւմտյանի) մշակված են «հայկական խորշերով»: Հարավային մուտքի վերին մասի արձանագրության համաձայն՝ Տեր Հովհաննեսը եւ Տեր Սարգիսը, բարերարների օժանդակությամբ, եկեղեցին կառուցել են 1281 թ., սակայն հարավային եւ հյուսիսային պատերի ստորին մասի վերաշարվածքը, արեւելյան ճակատի բարձրաքանդակում պատկերված եկեղեցու մանրակերտի կտարբերվելը ներկայիս կառույցից, հիմք են տալիս ենթադրելու, որ 1281 թ. եկեղեցին, որոշ փոփոխություններով, վերակառուցվել է: Գմբեթի բարձր թմբուկը զարդարված է դեկորատիվ կամարաշարով, հարավային եւ արեւմտյան դռներն ունեն XIII դ. բնորոշ շքամուտքեր: Արեւելյան ճակատին եկեղեցին կառուցող երկու հոգեւորականների պատկերաքանդակն է՝ եկեղեցու մանրակերտով: Սուրբ Աստվածածին եկեղեցուն արեւմուտքից կից է եղել այժմ ամբողջովին ավերված ժամատունը (հավանաբար նախկին կառույցի գավիթը):

1248 թ. Յաղարծնի վանական համալիրի արեւմտյան կողմում ճարտարապետ Մինասը Գրիգորեայի եւ Մովսեսի մասնակցությամբ կառուցել է Յաղարծնի վանքի սեղանատունը, որը միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության հոյակերտ ստեղծագործություններից է: Այն ընդարձակ, 21,6 x 9,5 մ չափերով ուղղանկյուն դահլիճ է՝ մեկ գույգ մույթերով բաժանված երկու հավասար երդիկավոր մասերի, յուրաքանչյուրը՝ ծածկված երկու գույգ փոխհատվող կամարների համակարգով: Արեւմտյան ճակատում կա լայնաթիչք կամարակապ բացվածք: Ներքին պարագծով ձգվում է քարե մատարանը: Հայկական ճարտարապետության մանաստիպ նշանավոր երկու կառույցներից մյուսը Յաղարծնի վանքն է:

# Գոշավանք (Նոր Գետիկ վանք, Գետկավանք) եւ Զաղարծին (Զաղարծնի վանք)

սկիզբը՝ էջ 10

Սեղանատան արեւելյան կողմում փայտածածկ խոհանոցն է: Սեղանատան արեւելյան մասում պահպանվել են այլ շինությունների ավերակներ (հավանաբար խոհանոցի, հացատան եւ այլն):

Զաղարծնի հուշարձանախմբի տարածքում կան թաղածածկ մատուռներ, գեղաքանդակ խաչքարեր: Զաղարծնի վանքի համալիրը հայկական ճարտարապետության կառույցների՝ շրջակա բնության հետ ներդաշնակության լավագույն օրինակներից է:

XIII դ. Զաղարծնի վանքը Ջոսիմա քահանայի միջոցով ստացել է 350 կգ կշռով բրոնզե կաթսա, որի պատկերազարդ շուրթի փորագրությունը նշում է պատրաստման տարեթիվը՝ 1232 թ.: Կաթսան հայկական գեղարվեստական մետաղագործության բարձրարվեստ մուշեղներից է, որի չորս կանթերն առյուծների արձանիկներ են: Կաթսան ունի քանդակազարդ ոտքեր:

XI դ. Զաղարծնի վանքն ավերվել է սելջուկ-թուրքերի արշավանքներից: XII դ. վրաց Գեորգի III թագավորի եւ հայոց իշխանների հրամանով համալիրը նորոգվել է, վերականգնվել են վանքի հողատիրական իրավունքները: XII դ. վերջին եւ XIII դ. սկզբին Զաղարծնի վանքն ստացել է բազում նվիրատվություններ՝ այգիներ, վարելահողեր, դրամ, ձեռագրեր եւ այլն:

1671 թ. թիֆլիսաբնակ Գեորգի ընտանիքը նորոգել է Սուրբ Ստեփանոս, իսկ 1681 թ. Զիթադյանները՝ Սուրբ Գրիգոր եւ Սուրբ Աստվածածին եկեղեցիները: XVIII դ. վերջին Զաղարծնի վանքն ավերվել է լքվել է Աղա Մուհամմեդ խան Ղաջարի արշավանքի հետեւանքով: Վանքը վերստին գործել է 1862 թվականից, նորոգվել 1901 թ.:

1960-ական թվականների վերջերին Զաղարծինը մասնակիորեն վերանորոգվել է:



2005 թ. Զայաստան է այցելում Արաբական Միացյալ Եմիրությունների Գերագույն խորհրդի անդամ, Շարժայի շեյխ Սուլթան բեն Մուհամմեդ ալ Քասիմին: Շեյխին ուղեկցող պետական այրերը նրան տանում են հիասքանչ Զաղարծնի վանք: Անկրկնելի գեղեցկությամբ զմայլված արաբ հյուրը, լսելով նաեւ տեղի սփյուռքահայ հոգեւորականի՝ արաբերենով ներկայացված բացատրությունները, պատրաստակամությամբ է հայտնում իր միջոցներով նորոգելու վանական համալիրը: Մեր հուշարձանաշինության ու հուշարձանների վերականգնման պատմության մեջ առաջին անգամն էր, որ ազգությամբ արաբ եւ կրոնով մահմեդական բարերարը հովանավորում էր հայկական հուշարձանի հիմնանորոգման աշխատանքները: Զաստատվում է վերջնական նախագիծը, որի հեղինակներն են ճարտարապետներ Էդուարդ Գրիգորյանն ու Մերի Դանիելյանը: Զաղարծնի վերականգնման ու շինարարական աշխատանքներն ավարտվեցին 2012 թ.: Արաբ հյուրերը հետագայում պատմում էին, որ Շարժայի շեյխը Զաղարծինը այնքան շատ է հավանել, որ անգամ վանական համալիրի լուսանկարն է տեղադրել իր գրասենյակում ու եկող-գնացող հյուրերին ծանոթացնում-պատմում է հայկական միջնադարյան եկեղեցական հրաշագեղ համալիրի մասին:

Վերականգնված Զաղարծնի պաշտոնական բացմանը դոկտոր Սուլթան բեն Մուհամմեդ ալ Քասիմին չկարողացավ ներկա գտնվել, սակայն ուղարկեց պաշտոնական ներկայացուցիչ: 2013 թ. հոկտեմբերի 19-

ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Զայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Տավուշի թեմում տեղի ունեցավ վերանորոգված Զաղարծնի վանական համալիրի բացման արարողությունը:

Զաղարծնի վանական համալիրը, ինչպես նաեւ միջնադարյան Զայաստանի հոգեւոր-մշակութային նշանավոր կենտրոն Գոշավանքը, Մաթոսավանքը, Ջուխտակ վանքը, Աղավնավանքը (Ախնաբաթի վանք), Ախնաբաթի կամուրջը, բնության հուշարձաններից Պարզ լիճը, Գոշ գյուղի մուտքի մոտի «Պահապաններ» կրաքարային ելքերը, Գոշի լիճը, Ֆլորովա բալկայի ձորը, Ախնաբաթի կենու պուրակը, Դիլիջանի ոլորանների կենու անտառակը, Կարմիր քարը, Պաղվալների ձորը, Ղափարի սալերը, Անագունի քարանձավները գտնվում են «Դիլիջանի ազգային պարկ»-ի տարածքում: «Դիլիջանի ազգային պարկ» ՊՈԱԿ-ը կազմակերպել է Զայաստանի Զանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 21-ի «Դիլիջանի ազգային պարկ» կազմակերպելու մասին» N 165 որոշմամբ Զայաստանի ՍՍՌ Մինիստրների սովետի 1958 թվականի սեպտեմբերի 13-ի N 341 որոշմամբ կազմակերպված «Դիլիջանի պետական արգելոց»-ի եւ դրան հարակից տարածքների սահմաններում: «Դիլիջանի ազգային պարկ»-ը կազմակերպվել է բուսական ու կենդանական աշխարհի անհետացող կամ վտանգված տեսակների պահպանման եւ տեղական պայմաններում այդ տեսակների վերականգնման ու բազմացման նպատակով: Իր հրաշագեղ բնու-

թյամբ, բազմատեսակ բնական եւ մշակութային հուշարձաններով հարուստ «Դիլիջանի ազգային պարկ»-ի տարածքը Զայաստանում հանգստի եւ առողջարանային ամենաիրաված գոտիներից է:

## Ավանդապատում

Ըստ ավանդության՝ այս վանքի գլխավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու հանդիսավոր օծման ժամանակ երկու սրբակենցաղ վանականներին տեսիլք է հայտնվում, ու նրանք տեսնում են, թե ինչպես է Սուրբ Գեորգի արծվի վեհաշուք ճախրանքով իջնում եկեղեցու գմբեթին: Ապշահար վանականները ցանկանում են, որ մյուս ներկաները եւս տեսնեն այդ հրաշքը, ուստի համրացած մատնացույց են անում գմբեթի խաչի շուրջ սավառնող թռչնին, ասելով «հաղ (հաղ) արծվի, հաղ արծվի»: Ասում են, թե այդ օրվանից եկեղեցին ու վանական համալիրը սկսեցին կոչել «հաղ արծվի», որն էլ հետագայում ձեւափոխվել ու դարձել է Զաղարծին:

\* \* \*

Ըստ Զայի հաշատրյանի՝ աշխարհի ամենագեղատեսիլ յոթ անկյուններից մեկը այն ձորահովիտն է, որ ընկած է Դիլիջան քաղաքից տասնութ կիլոմետր հյուսիս, եւ ուր գտնվում է Զաղարծնի վանքը: Այստեղ 1281 թվականին կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցու կողքին մի ընկուզենի է աճում, որը եկեղեցուն հասակակից է՝ 700 տարեկան: Ավանդությունն ասում է, որ այդ եկեղեցին կառուցող վարպետը սովորություն է ունեցել իր կառուցած շենքերի կողքին ընկուզենի տնկել:

- Շենքը չմնաց, ծառը կմնա, ծառը չմնաց, շենքը կմնա,- սիրում էր կրկնել վարպետը: - Եկեղեցին մարդու հոգին է քաղցրացնում, ընկուզենին՝ բերանը:

Ժամանակին այդ հրաշք ընկուզենին եկեղեցու հետ միասին հավերժացնում էր վարպետի հիշատակը, սակայն 2013 թ., անփութության հետեւանքով (ընկուզենու փչակում հավանաբար մոմ էին վառել), դարավոր ընկուզենին վառվեց, եւ Զաղարծինը զրկվեց իր զմրուխտե խորհրդանիշ-գեղեցկուհուց: Զաղարծին այցելած եւ հոգով քաղցրացած մարդը, ցավոք, այլեւս հնարավորություն չունի իր բերանն այս ընկուզով քաղցրացնելու...

Վերջերս ընկուզենին կարծեք թե փործում է մոխիրներից հառնել, նա մի դալար ոստ էր արձակել, որը, միգուցե, հսկա ընկուզենի դառնա:

Արման ՄԱՆՈՅԱՆ  
պատմական գիտությունների  
թեկնածու



## Վերականգնվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին

Բարերարի ջանքերով վերականգնվել է ԳՅ Սյունիքի մարզի Լեռնաձոր համայնքի Քրդիկանց բնակավայրի Սուրբ Աստվածածին եկեղեցին:

Վերականգնող ճարտարապետ Ամիրան Բաղիշյանի կողմից դեռեւս նախորդ տարի ներկայացվել էր Սուրբ Աստվածածին եկեղեցու տարածքի բարեկարգման եւ զանգակատան իրականացման էքսիզային նախագիծը: Այն քննարկվել էր 2022 թ. օգոստոսի 23-ին կայացած ԳՅ ԿԳՄՍ նախարարությանը կից գիտամեթոդական խորհրդի 5-րդ նիստում եւ արժանացել հավանության: Դրանից հետո նախարարության հետ համաձայնեցվել է եկեղեցու վերականգնման աշխատանքային նախագիծը:

Եկեղեցու ներքին տարածությունը պատշաճ վիճակի բերելու համար իրականացվել է սրահի, դասի, ավանդատների եւ բեմի սալահատակ կանոնավոր, տարբեր չափերի բազալտյա սալերով, խառը շարվածքով: Տեղադրվել է փայտյա քանդակազարդ նոր դուռ եւ տեղադրվել է զանգաշտարակ ժամանակաշրջանին եւ Սյունիքի տարածաշրջանին բնորոշ ճարտարապետական լուծումներով: Մաքրվել է հյուսիսային ճակատում լանջից քարաքափումների արդյունքում սողների տակ թաղված եւ անմխիթար, քայքայված վիճակում գտնվող տանիքը: Պեղումներն իրականացվել են հնագետի ուղեկցությամբ, որի ընթացքում բացվել են բնական ժայռերը՝ ստեղծելով բնական միջավայր: Ապահովվել է նաեւ ներքին լուսավորության համակարգով:

Կառուցվել են նաեւ բազալտյա անտաշ քարերով հենապատեր՝ ընդօրինակելով շրջակայքում պահպանված տարբեր կառույցների պատերին բնորոշ շարվածքը, ստեղծելով երբեմնի գյուղական միջավայրին հարազատ իրավիճակ, եկեղեցու երեք կողմերում աստիճանաձեւ շարվածքներ անտաշ եւ կոպտատաշ բազալտներով, զբոսմնավոր քաղաքային կերպարի ստեղծումից: Եկեղեցու հարավային հարակից հարթակը սալարկվել է ճեղքած, անկանոն եզրագծերով բազալտյա քարերով՝ (բուսածածկ կարաններով) պահպանելով հողածածկույթի տակից բացահայտված պատաշարվածքների եւ թոնրի մնացորդները, բնական ժայռաքարերը:



Բարի լուր

Ամառ

Նոր հաջողություններ

Ճապոնիայի Չիբա քաղաքում կայացել է «Մաթեմատիկա» առարկայի 64-րդ միջազգային օլիմպիադան, որին մասնակցել է 112 երկրի 618 աշակերտ:



Չայաստանի թիմը ներկայացել է վեց աշակերտով. չորս դպրոցական Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցից, իսկ երկուսը՝ «Քվանտ» վարժարանից:


Ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի սաներ Կամո Միրաբջյանը և Արեգ Մկրտչյանն արժանացել են արծաթե, ըստ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Վահան Բաղդասարյանը և «Քվանտ» վարժարանի սաներ Զամելտ Պետրոսյանը (12-րդ դասարան) ու Ադասի Դարբինյանը (10-րդ դասարան) բրոնզե մեդալների, իսկ ֆիզմաթ հատուկ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Ծովակ Եզրոյանը՝ գովասանագրի: Թիմային հաշվարկում Չայաստանի թիմը զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը:

Չայաստանի թիմը ղեկավարել են Սմբատ Գոգյանը (ԳԱԱ, «Քառակուսի» կրթական հիմնադրամ), Գուրգեն Ասատրյանը (ՀՊՄՀ) և Տիգրան Մարգարյանը (Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց):

Հիշեցնենք, որ Մաթեմատիկայի 63-րդ միջազգային օլիմպիադայում, որն անցկացվել է առցանց ձևաչափով, Չայաստանի թիմն արժանացել էր 2 արծաթե և 4 բրոնզե մեդալների:

\* \* \*

Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում առկա ձեռագրված անցկացվել է Ֆիզիկայի 53-րդ միջազգային օլիմպիադան, որին մասնակցել են 80-ից ավելի երկրների ներկայացուցիչներ:



Չայաստանի թիմը, որի կազմում ընդգրկված էր 5 աշակերտ, նվաճել է 1 արծաթե և 4 բրոնզե մեդալ:

Արծաթե մեդալի է արժանացել Չայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի (ՀԱՊՀ) ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Զովսեսի Կարապետյանը, իսկ բրոնզե մեդալների՝ Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 12-րդ դասարանի սաներ Արեգ Բարսեղյանը, Մարիա Առաքելյանը, Վյաչեսլավ Պետրոսյանը և 11-րդ դասարանի աշակերտ Արսեն Աղայանը:

Թիմը ղեկավարել են Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի ուսուցիչներ Բիլոր Կուրդինյանը և Զրանտ Թովչյանը:

Օլիմպիադան անցկացվել է փորձնական և տեսական փուլերով:

Հիշեցնենք, որ «Ֆիզիկա» առարկայի նախորդ՝ 52-րդ միջազգային օլիմպիադայում, որն անցկացվել էր առցանց ձևաչափով, Չայաստանի թիմն արժանացել էր 3 բրոնզե մեդալների և 2 գովասանագրի:

Իրենց հանգիստն են անցկացնում տարեկան 3200 երեխաներ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արարսիա Սվաջյանը հյուրընկալվել է Հանքավանի «Հասմիկ», «Արագած», «Հեքիաթային կիրճ», «Լուսաբաց» ճամբարներում առաջին հերթափոխով ամառային հանգիստն անցկացնող երեխաներին:

Նախարարի տեղակալը տեղում ծանոթացել է ճամբարում ստեղծված պայմաններին, երեխաների հագեցած առօրյային և նրանց մաղթել ուրախ ու անմոռանալի հանգիստ:

Դպրոցականների ամառային ճամբարը կազմակերպվել է ՀՀ կառավարության «Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում և տրամա-


պորտային ծախսերի փոխհատուցում» պետական ծրագրի շրջանակում: Հուլիսի 1-20-ը զոհված, հաշմանդամ զինծառայողների, ծնողազուրկ ու սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների 1600 դպրոցահասակ երեխաներ հանգստանում են «Հասմիկ», «Արագած», «Հեքիաթային կիրճ», «Լուսաբաց» և «Լավա աղբյուր» ճամբարներում:

Ճամբարային բազմաթիվ ծրագրերում ներառված են նաև կրթական, սպորտային, մշակութային բաղադրիչներ: Մասնավորապես՝ իրականացվում են երաժշտական ընդունակությունների զարգացման, տուրիզմի, բնության ճա-

նաչողության, լեզվաճանաչողության, արվեստի (նկարչություն, քանդակագործություն և այլն), ֆիզիկական դաստիարակության և պատմաճանաչողական ճամբարային ծրագրեր:

Ամառային հանգստի կազմակերպման ճամբարային ծրագիրն իրականացվում է երկու հերթափոխով: Հաջորդ 2-րդ հերթափոխը, կկազմակերպվի 2023 թվականի հուլիսի 20-ից օգոստոսի 8-ը, որին կրկին կմասնակցեն 1600 դպրոցահասակ երեխաներ:

Ծրագրի շրջանակում, ընդհանուր առմամբ, ապահովվում է վերոնշյալ ընտանիքների 7-13 տարեկան 3200 երեխաների հանգստի կազմակերպումը:



Նախագիծ

Հատակեցվում է լավագույն ուսանողներին տրվող մրցանակների շնորհման ընթացակարգը

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել ՀՀ բուհերի լավագույն առաջադիմությամբ ուսանողներին ըստ ոլորտների տրամադրվող կրթական մրցանակների շնորհման կարգի նախագիծը:

Գործող կարգի կիրառման ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, որոնք դժվարություններ են առաջացնում մրցույթի անցկացման ընթացքում: Հաշվի առնելով ներկայացված նախագծով նախատեսվող փոփոխությունների քանակը՝ առավել նպատակահարմար է նախորդ որոշումն ուժը կորցրած ճանաչել և հաստատել նորը:

Նախագծի նպատակն է՝ բացահայտել և խրախուսել բուհերի այն ուսանողներին, որոնք ցուցաբերել են բարձր առաջադիմություն և իրենց առավել ակտիվ են դրսևորել համապատասխան մասնագիտական ոլորտներում, նպաստել ուսանողների առաջադիմության բարձրացմանը, խթանել ուսանողների մասնակցությունը և ձեռքբերումները մասնագիտական ոլորտների աշխատանքներում, խթանել մրցակցությունը բուհերի ուսանողների միջև:

Նախագծով առաջարկվող կարգավորմամբ հստակեցվում է մրցույթի անցկացման գործընթացը. նախկինում հանձնաժողովի որոշմամբ կարգավորվող հարցերը կարգավորվում են Կառավարության որոշմամբ՝ բացառելով երկակի չափանիշների կիրառումը:

Կրթական մրցանակին կարող են հավակնել ՀՀ բուհերի առկա ուսուցմամբ սովորող, առաջին կուրսն ավարտած (մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների դեպքում առաջին կիսամյակն ավարտած), ուսումնառության արդյունքներով միջին որակական գնահատականի առավելագույն արժեքի 90 տոկոսը հաղթահարած այն ուսանողները, որոնք ուսումնական տարվան նախորդող երեք տարվա ընթացքում մասնակցել են՝

- ներկայացված ոլորտների հանրապետական կամ միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների և ունեցել զեկուցումներ, հաղորդումներ, էլույթներ,
- հանրապետական կամ միջազգային առարկայական կամ ուսանողական օլիմպիադաների և դարձել մրցանակակիրներ,
- հայոց լեզու կամ հայ գրականություն կամ հայոց պատմություն առարկաներից դպրոցականների հանրապետական օլիմպիադաների և դարձել մրցանակակիրներ,
- արվեստի գծով կազմակերպվող հանրապետական կամ միջազգային միջոցառումների և ունեն մրցանակներ,
- հանրապետական մարզական մրցաշարերին կամ տարբեր մարզածեերի գծով աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, օլիմպիական խաղերին և զբաղեցրել են մրցանակային տեղեր,
- ուսանողական ինքնակառավար-

ման մարմինների աշխատանքներին, կամավորական աշխատանքների, սոցիալական և համայնքային զարգացման ծրագրերին:

Նախագծով սահմանված է՝ մրցույթին չեն մասնակցում ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի «Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում կրթական մրցանակները, դրանց շնորհման և հանձնման կարգը սահմանելու մասին» N 675-Ն որոշման դրույթների համաձայն տվյալ ուսումնական տարում անվանական կրթաթոշակ ստացած ուսանողները: Հիշյալ դրույթի ամրագրումը պայմանավորված է այն գավառում կրթական մրցանակները, դրանց շնորհման և հանձնման կարգը սահմանելու մասին» N 675-Ն որոշման դրույթների համաձայն տվյալ ուսումնական տարում անվանական կրթաթոշակ ստացած ուսանողները մրցույթին չմասնակցեն, ինչը միավորների փոքր տարբերությամբ անվանական կրթաթոշակ չստացած բարձր առաջադիմություն ունեցող մյուս ուսանողներին անվանական կրթաթոշակ ստանալու հնարավորություն կտա:

Յուրաքանչյուր անվանակարգի համար նախատեսված պարգևատրման չափը՝ մինչև տվյալ տարվա փետրվարի 15-ը հաստատում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը՝ հիմք ընդունելով տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված ֆինանսական հատկացումները:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ



## Արցախ

### Ցավի մասին

Ցավը մարդու մշտական ուղեկիցն է, եւ այդ հրեշիւն պարտութեան մատնելու համար աղանդորդին չի դադարում նոր բալասանի որոնումը՝ պեղելով ոչ միայն սեփական մարմինն ու հոգին, այլեւ իր պատմութիւնն ու ծննդոց մատյանը:

Բայց մարդուն հետամուտ ցավն էլ չի դադարում իր դաժան էվոլյուցիան՝ երեւան հանելով դեւածին նոր շերտերը՝ միշտ քայլ առաջ:

Հայերս, ի հեճուկս չար բախտի, մեր պատմութեան տարբեր կեանքներում կարողացել ենք անցնել հազարադեմ համաճարակ-ցավերի միջով, սակայն, արդեն քանի դար է, չենք կարողանում ազատվել ազգային ցավից, մեր աշխարհը կալանած թուրքից:

Աշխարհի շատ ժողովուրդներ եւս իրենց պատմութեան ընթացքում պայքարել են անկախութեան ու ազատութեան համար եւ, հայրենագրկման, ցեղասպանութեան սպառնալիքը հիմա անցյալում է: Նրանց համար բնաջնջման ցավ-տազնալը ժամանակի ընթացքում վերացել է՝ գոյաբանական այլ ազդանշաններ ստեղծելով:

Դժբախտաբար, մենք չկանք նման երջանիկների շարքում, մեր հազարամյա ցավի ազգանշանները չեն փոխվել մինչ այսօր:

Ավելին, դարեր շարունակ այդ ցավը բյուրապատկվել է մեր հայրենիքն ավերող հրոսակների աղետալի հաջորդականութեամբ:

Բայց 21-րդ դարում մեր գոյությունն ասում է, որ շատ զավթիչների արշավանքներին ենք կարողացել ընդդիմանալ եւ փրկվել իսպառ բնաջնջումից:

Միջնադարում խաչնազետ հասած մոնղոլները, ուժեղ դիմադրություն ստանալով, հետ են քաշվել իրենց երկիրը, իսկ ահա միջինասիական քոչվոր թուրքական ցեղերին մեր հայրենիքը եղեմական պարտեզ է երեւացել եւ, այն թիզ առ թիզ ամայացնելով, եկել՝ հասել են Քուռ-Արաքսի միջագետք Արցախից մնացած փոքրիկ այս հատվածին:

Այնինչ, լինելով աշխարհի հին ժողովուրդներից, մեր ազգային ցավն էլ իր երկար ճանապարհին պետք է բացառեր սարսափելի աղետների՝ հայրենագրկման, եղեռնի հավանականությունը: Մեր աշխարհի երեսից վերանալու տազնալը

վաղուց հաղթահարած պետք է լինեինք: Սակայն, ի հակառակ մարդկության գարգացման բնական ընթացքին, այսօր էլ կանգնած ենք նույն աղետներին ի համդիման:

Ասում են՝ ում շատ է տրված, նրանից էլ շատ է պահանջվում: Ավետյաց երկիր ունենալու համար քվացել է, թե մեզ շատ է տրված: Եվ մեր մաքառումն էլ այն պահելու, պաշտպանելու համար առավել պետք է լինեին: Այդ ամենի թելադրանքով մենք նաեւ մեր հազարամյա ցավն ենք զինվորագրել՝ իբրեւ մարտնչող ոգի: Եվ այդ ոգին չի լռել անգամ ամենադժնի ժամանակներում:

Դրա վառ ապացույցներից է արցախյան ազատամարտի նվիրյալ, պատմագիտության դոկտոր Բագրատ Ուլուբաբյանի հետեւյալ խոսքը. «Ապրել հայկական հազարամյա ցավի ու հոգիի հետ եւ միաժամանակ լինել երջանիկ: Ես երջանիկ եմ, որ հայ եմ ծնվել, հայավարի եմ ապրել եւ աշխարհին հրաժեշտ պիտի տամ որպէս հայ ազգի որդի: Եվ սա պարապ խոսք չէ կամ պատեհապատշաճ հայտարարություն: Սա երդում է, խոստովանանք, այն ամենատուրքն ու ամենաէականը, որը հոգու հետ մտնում, հոգու հետ էլ դուրս է գալիս»:

Կարմիրների վարած կեղծ եղբայրության քարոզին ընդդէմ Արցախի փրկության կոչով, ԽՍՀՄ իշխանութեան ամենաբարձր ատյաններ հասած, 1965 թ.-ի հայտնի 13-ի նամակի նախածնողն էր Բագրատ Ուլուբաբյանը: Ազգային գործին իր կյանքն ապրել է անխախտ երդումով:

...Ազատության պայքարի երանելի դրվագը հաղթական էլքով՝ 88-ի ազգային-ազատագրական շարժումն էր, բայց այն հեռացող գիսավորի պէս այսօր միայն իր լուսավոր հետքն է թողել մեր կսկծալի հիշողությանը... 88-ի առաջին ցույցի մասնակցի ու այսօր էլ նույն ցավի պահանջով Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ազատություն տենչողի իրավունքով եմ ասում...

44-օրյա պատերազմը բզկտեց Արցախը, եւ այսօր դժվար է զատել սահման եւ թիկունք հասկացությունները:

Թշնամուց փրկված մեր հայրենիքի այս հատվածը, հիմա, առաջնագիծ է, իսկ

մենք բոլորս՝ սահմապահներ:

Թշնամին գործում է շատ պարզ, անգամ մեր բյուր տառապանքներին ի հանդիման կույր ու խուլ ձեւացող աշխարհին անչափ տեսանելի մեթոդով. ազատվել Արցախի տերերից, վերացնել մեր իսկ հայրենիքում մեր հետքը, ներկայությունը՝ առավել վտանգելով մայր Հայաստանի գոյությունը: Իսկ թուրքին ուղղված ամենազորեղ պատիժը մեր հայրենիքի փրկությունն է, եւ այդ հույսն էլ նորոգվում է մեր հոգում ամեն օրվա հետ...:

Մեջբերենք Բագրատ Ուլուբաբյանի, հիրավի, մարգարեական խոսքը, որը թեւ գրվել է 1988-ին, սակայն մերօրյա հնչողությունն ունի. «Մեր պատմության մեջ շատ են նորոգվող, հաճախ նույնիսկ մանրամասներով կրկնվող դեպքերը: Եվ ահա մեր օրերում էլ հայոց վերջին կենդանի բեկորը, որը ստեղծագործ էր իրեն Արցախի խնդիր, կրկնվում է, բացվում նույն մանրամասներով, որ եղել են 18-20 թվականներին՝ մեր դեմ հանված բաթարթուրը-քուրդ ավազակախմբերի ու դաշնակիցների միսիայի համերաշխ բարդություններով: Եկողները մեր ազատաբաղձ, անկախության համար պայքարող ազգակիցներին զինաթափ էին անում, կապտում եւ նրանց վրա բաց թողնում սանձազերծ ու սպառազեն թշնամական ուժերին: Այդ, կրկնվում է պատմությունը, եւ այսօր էլ նույն վիճակն է... Իսկ ողջախոհները... Նրանք պետք է մաքառեն, պիտի մինչեւ վերջ դիմակայեն նաեւ այս փորձությանը եւ հասնեն հաղթանակի՝ քաջ գիտակցելով այն մեծ ու դաժան ճշմարտությունը, որ դարասկզբին տարփողում էին մեր ազգի ազատության նվիրյալներն ու այլազգի բարեկամները: -Հայոց պետությունը,- նրանց խորին խորհուրդն էր գոյուշացնում,- ինչ ցուցանակ էլ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Արցախական աշխարհի»:

Ուրեմն, նորից պետք է կրակի մեր հազարամյա ցավը... ազատության գոհասեղանին կրկին մեր չիրկիզվող երազանքն է ու կյանքը... կրակված, բայց ոչ իրկիզվող ու մոխրացող...:

**Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
Բ. Ստեփանակերտ,  
մեր սեփական թղթակից**

## Բարի Լուր

### Շարունակական հաղթանակներ

Շվեդիայի Լուևո քաղաքում կայացել է ինֆորմատիկայի Եվրոպայի աղջիկների 3-րդ օլիմպիական, որին մասնակցել է 52 երկրի 189 դպրոցական: Օլիմպիական անցկացվել է երկու փուլով:



Հայաստանի թիմը ներկայացել է չորս մասնակցով, որոնցից երեքը ներկայացնում էին Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը, իսկ մեկը՝ Շիրակացու անվան ճեմարանը: Ֆիզմաթ հատուկ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ **Ֆիլյա Գեիկյան** արժանացել է արծաթե, իսկ նույն դպրոցի սաներ **Մերի Բաղայան** (12-րդ դասարան), **Արփի Պրազյան** (10-րդ դասարան) եւ Շիրակացու անվան ճեմարանի աշակերտ **Սյուզաննա Գրիգորյան** (12-րդ դասարան) բրոնզե մեդալների:

Հայաստանի թիմը ղեկավարել են **Արմեն Անդրեասյանը** (ԵՊՀ դասախոս) եւ **Սամվել Անդրեասյանը** (ԵՊՀ ուսանող):

Հիշեցնենք, որ ինֆորմատիկայի Եվրոպայի աղջիկների 2-րդ միջազգային օլիմպիական առկա ձեւաչափով անցկացվել է Թուրքիայում, որին Հայաստանի թիմը չի մասնակցել, իսկ 1-ին օլիմպիականում, որն անցկացվել էր 2021թ.-ին առցանց ձեւաչափով (կազմակերպիչ երկիր՝ Շվեյցարիա) ՀՀ թիմն արժանացել էր 1 արծաթե եւ 1 բրոնզե մեդալների:

Հայաստանի թիմի մասնակցությունն օլիմպիականին ապահովվել է ՏՏ ոլորտի հետեւյալ ընկերությունների՝ Sky Labs, Zoomerang եւ IQ Soft հովանավորությամբ:

\* \* \*

Յուրիխում (Շվեյցարիա) անցկացվել է Քիմիայի 55-րդ միջազգային օլիմպիական, որում Հայաստանի թիմը նվաճել է 1 ոսկե եւ 2 բրոնզե մեդալներ:



Հայաստանի թիմը ներկայացրել են Քվանտ վարժարանի 12-րդ դասարանի աշակերտներ **Լեոնիդ Ասատրյան** ու **Յուրի Պետրոսյան**, Գյումրու Ֆոտոն վարժարանի 12-րդ դասարանի աշակերտ **Տիգրան Մխիթարյան** եւ Վանաձորի մաթեմատիկական եւ բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ **Արման Խառատյան**:

Հայաստանի թիմի մասնակցներից ոսկե մեդալ է արժանացել Լեոնիդ Ասատրյանը, բրոնզե մեդալների՝ Տիգրան Մխիթարյանը եւ Արման Խառատյանը, իսկ գովասանագրի՝ Յուրի Պետրոսյանը:

Թիմը ղեկավարել են ՀՀ ԳԱԱ-ից՝ **Անդրանիկ Դավիթյանը** եւ ԵՊՀ-ից՝ **Արմեն Գալստյանը**:

Օլիմպիականին մասնակցել է 90 երկրի 355 ներկայացուցիչ՝ յուրաքանչյուր երկրից առավելագույնը 4 մասնակից: Օլիմպիական անցկացվել է գործնական եւ տեսական փուլերով:

### Հաստատվել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ պարարվեստի դպրոցների օրինակելի ուսպլանները

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել են երաժշտական, արվեստի, գեղարվեստի եւ պարարվեստի դպրոցների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները:

Սահմանվել է, որ վերոնշյալ դպրոցներում ուսումնական տարիին մեկնարկում է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների համար նախատեսված ժամկետներին համապատասխան: Նույնը վերաբերում է նաեւ աշնանային, ձմեռային եւ գարնանային արձակուրդներին:

Համաձայն օրինակելի պլանների ուսումնական տարվա տեւողությունը 34-40 շաբաթ է: Մասնագիտական առաճճնահատություններով եւ շենքային պայմաններով պայմանավորված կարող է սահմանվել վեցօրյա ուսումնական շաբաթ: Առարկաների եւ դասաժամերի քանակն ուսումնական պլանում կարող է ընդլայնվել՝ կախված դպրոցի ֆինանսական հնարավորություններից:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձեւերն են անհատական եւ խմ-

բային պարապմունքները: Անհատական դասի տեւողությունը՝ 45, խմբայինը՝ 40 րոպե է:

Դպրոցի սովորողների գիտելիքների գնահատումը կատարվում է ուսումնական պլանով նախատեսված առարկաների մասով կազմակերպվող տարբերակված ստուգարքներով եւ քննություններով: Քննությունը գնահատվում է գնահատման 10 միավորային համակարգով: Դպրոցի եւ սովորողի ծնողի փոխադարձ համաձայնությամբ սովորողի անհատական պարապմունքների անընդմեջ միջնա 16 դասամաս հարգելի բացակայության դասաժամերը կարող են համարվել՝ դպրոցի առաջարկած ժամանակացույցի համաձայն:

Դրսեկության ձեւով (էքստեն) դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ փոխադրումը կազմակերպվում է ուսումնական պլանով նախատեսված ստուգարքների եւ քննությունների համաձայն, սովորողի գերազանց առաջադիմության, դպրոցի մակավորական խորհրդի որոշման եւ լիազոր մարմնի թույլտվության դեպքում: Ուսումնառուական ամբողջ ժա-

մանակահատվածում սովորողը դասարանից հաջորդ դասարան վաղաժամկետ կարող է փոխադրվել միայն մեկ անգամ:

Դպրոցի ավարտական վկայականը տրվում է ավարտական ստուգարքներն ու քննությունները համաձայն եւ ուսումնական պլանով նախատեսված բոլոր դասաժամերի առնվազն 70% հաճախում ունեցած սովորողներին: Դպրոցում վճարովի հիմունքներով կարող է կազմակերպվել նախադպրոցական, հետդպրոցական, ինչպես նաեւ ընդհանուր գեղագիտական զարգացման գծով ուսումնառություն:

Տեսական առարկաների (սովետ, երաժշտական գրականություն, արվեստի պատմություն, երաժշտական գրագիտություն եւ ունկնդրում) խմբային պարապմունքների մեկ խմբում ընդգրկված սովորողների թվաքանակը սահմանվում է 6-12: Առանձին դեպքերում փոքր համակազմ ունեցող դպրոցում այն կարող է սկսել 3 սովորողից: Լիազոր մարմնի որոշմամբ՝ դպրոցում ուսուցումը կարող է կազմակերպվել հեռավար եղանակով:

### Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Տավուշի մարզի «Քարեկամավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկուլտուրայի, աշխարհագրության, բնօրհայի, ռուսաց լեզվի ուսուցչի բա- փուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ բնետավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատու- րյունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չա- փի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» 33 օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատաս- խան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատան- քային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ 33-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- 33 արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փա- տաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատաս- խանատու անձը փաստաթղթերի բնօրինակ- ները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկա- ցված փաստաթղթերի ցանկն ամբողջա- կան չէ կամ առկա են բնօրինակներ, մասնա- կիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդուն- ման ժամկետի ավարտը վերացնել և հա- մալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շա- բաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **օգոստոսի 10-ին՝ ժամը 14:00-ին**, 33 Տավուշի մարզի Քա- րեկամավանի միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Քարեկամավան 1-ին փ., շ. 5/1:

Տեղեկությունների համար զանգահա- րել՝ (094) 90-20-49 հեռախոսահամարով:

### Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ 33 Վայոց ձորի մարզի «Սարավան գյուղի հիմնական հան- րակրթական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (20 դասաժամ), աշխարհագրության (4 դասա- ժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), ռուսաց լեզվի (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղե- րի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ բնետավորման և հարցազրույցի: Թեստավոր- ման փուլն անցկացվում է՝ ըստ 33 ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատուրյունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չա- փի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» 33 օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատաս- խան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատան- քային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ 33-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- 33 արական սեռի քաղաքացիները՝ նա- եւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատաս- խանատու անձը փաստաթղթերի բնօրինակ- ները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկա- ցված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են բնօրինակներ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և հա- մալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շա- բաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **օգոստոսի 10-ին՝ ժամը 14:00-ին**, 33 Վայոց ձորի մարզի Սա- րավան գյուղի հիմնական հանրակրթական դպ- րոցում, հասցեն գ. Սարավան, 3-րդ փ., շ. 23:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 84-38-61 հեռախոսահամարով:

### Հայտարարություն

«Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբա- րեցնելու համար:

**Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցե- լու պարտադիր պայմաններն են՝**

1) 33 քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

**Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝**

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի ամուսնով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներ- կայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թվականի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կի- րակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:**

«Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցեն ք. Գյումրի, Բուլվարային 10 Ա:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի օգոստոսի 24-ին՝ ժամը 12:00-ին**, «Գյումրու օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցեն ք. Գյումրի, Բուլվարային 10 Ա:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (055) 30-15-56 կամ (094) 30-05-56 հեռախո- սահամարներով:

Էլեկտրոնային հասցեն **golimpiakan@yandex.ru:**

### Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ 33 ԿԳՄՍՆ «Երեւանի հ. 1 արհեստագործական պետական ուսում- նարան» ՊՈԱԿ-ի «Ինֆորմատիկա» (19 ժամ), «Անգլերեն» (22 ժամ), «Հայոց պատմություն» (11 ժամ) առարկաներ դասավանդող մասնակարգի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է մեկ փուլով:

**Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**

- դիմում «Ձեւ 1»,

- մեկ լուսանկար 3x4 չափի,

- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» 33 օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշ- խատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ 33-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստա- րուղթ,

- 33 արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առ- կայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև օգոստոսի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **օգոստոսի 14-ին՝ ժամը 14:00-ին**, Երեւանի N 1 արհեստագործա- կան պետական ուսումնարանում, հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 65:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 44-37-01, (055) 32-46-76 հեռախոսահամարնե- րով:

### Հայտարարություն

